


G. Guggenberger & Co.



891.995  
2-30


STYRIA

73




PLUS 87A  
MAY 1911

394  
2-50.47



17 APR 2014



Ձեր համայնք է՛մ յեր գործը,  
ի՛նքն արժեք խառնչե՛րս,  
Գո՛րծ է՛մ, եր յառ Կարգ առ  
Արժեք ունե՛մ, աշխատանքի:

Բ. Գալստյան

891.995  
Σ-30 48.

30 MAY 2011

ՀԱՅՐԱՊԵՏՆԱՆ

**ԻՄ  
ՅԵՐՈՒՆԵՐԸ**


ԿԱՐԱՋԱՐՈՒՄԸ  
Ա.ՐԱՂՊԱՍԱՐՅԱՆԻ

ՀԼԿԵՆ ԿԿ ԿԻՑ ՄԱՍԿԱՏԱՆՍՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԲԱԺԻՆ

1939

ՊԵՏՏՐՍ

ՅԵՐԵՎԱՆ



А. АЙРАПЕТЯН  
 МОИ ПЕШНИ  
 Гиз Арм. ССР, Ереван, 1939

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ  
 2009

3009

**ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄԸ**

Հայրապետ Հայրապետյանը մեր մանկական-պատանեկական գրականության մեջ նշանակալից տեղ է գրավում: Նա իբր ամբողջ գիտակցական կյանքը — քառասունհինգ յերկար տարիներ — նվիրել է մանուկների դաստիարակության գործին — թե իբրև ուսուցիչ, և թե իբրև մանկական գրող:

Հ. Հայրապետյանը ծնվել է 1874 թվին Նախիջևանի Ավտոնամ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Տանակերտ գյուղում: Մկղբնական կրթությունն ստացել է տեղի տիրացուական — տեր-թողիկյան դպրոցում: Տասը տարեկան հասակում տեղափոխվել է Զաքարթալ (Ադրբեջան), ուր և վերջացրել է ծխական դպրոցը: 1888 թվին Հայրապետյանը մտնում է Թբիլիսիի Ներսիսյան դպրոցը, վորն ավարտում է 1893 թվին: Այնուհետև, ավարտման օրից մինչև 1934 թիվը, ամբողջ քառասուն տարի, նա ուսուցչություն է արել Անդրկովկասի հայկական դպրոցներում, ղլխավորապես գավառում:

Իր մանկավարժական գործունեությունից յերկարամյա ընթացքում, Հայրապետյանը յեղել է ազնիվ և նվիրված մանկավարժ թեև արհամարհվել ու հալածվել է հայ բուրժուական ինտելիգենցիայից, վորպես «հասարակ վարժապետ», սակայն ջերմ սիրով սիրվել է աշակերտներից ու գնահատվել:

Ինչպես հայ աշխատավորական-դեմոկրատական ինտելիգենցիայից շատերը, նույնպես և Հայրապետյանը, 1917 թ. Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ Հեղափոխությունից ժամանակ շրջադարձ է կատարում գեպի հեղափոխությունը, նրա մեջ տեսնելով բուլար աշխատավորների ազատագրությունը: Այդ շրջադարձն արտահայտվել է 1917 թ. գրած նրա մի բանաստեղծությունից.

Դու լսում ես փոթորիկը  
 Լայնածավալ Հյուսիսի,  
 Այդ հսկան է շարժվում տեղից,  
 Հիմի կեխի, կխոսի:

Գիտեն արդյոք, թնչ ե բերում  
Փոթորիկը մոլեգին.  
Մեր տանջանքին վերջ ե բերում,  
Մեր յերազը թանկագին:

Հայրապետյանը վոչ միայն փոջուցում ե հեղափոխությունը, այլև կոզում ե հեղափոխության համար. յերկու տարի ծառայում ե Կարմիր բանակում մերթ վորպես Ռազմա-հեղափոխական տրիբունալի զործերի վարիչ, մերթ վորպես դիվիզիայի պետի ադյուտանտ կամ դիվիզիայի շաքի վարչա-անտեսական մասի պետի տեղակալ: Խորհրդային իշխանության խաղաղաշինարարական շրջանում, Հայրապետյանը նոր լեռանդով նվիրվում ե իր այնքան սիրած մանուկ սերնդի դաստիարակության գործին ե մանկական գրականությանը: ՀԽՍՀ կառավարությունը, բարձր գնահատելով Հայրապետյանի գործունեությունը, նրան ալիս ե պատվո գիր ե նշանակում անհատական կենսաթոշակ: Իսկ 1934 թվին նշվում ե վաստակավոր մանկավարժի ե մանկական գրողի գրական-մանկավարժական գործունեություն թանաթումյակը:

\* \*

Հ. Հայրապետյանը գրել սկսել ե 1888 թվից, գեռես ներսիսյան դպրոցի աշակերտ յեղած ժամանակ: Առաջին ապագրված գործը լույս ե տեսել «Աղբյուր» ամսագրում: Յերբ 1905 թվից Թբիլիսիում Սա. Լխիցյանի խմբագրությամբ ե հրատարակությամբ սկսում ե լույս տեսնել «Հասկեր» մանկական պատկերազարդ ամսագիրը, Հայրապետյանը դառնում ե նրա հիմնական աշխատակիցներից մեկը: «Հասկեր»-ում են ապագրվել նրա բազմաթիվ գեղեցիկ մանկական բանաստեղծությունները, ինչպես՝ «Անցան», «Գարուն», «Մայիս», «Գիշեր» ե այլն: Իսկ 1907 թվից, յերբ լույս ե տեսնում Հովհ. Թումանյանի ե Սա. Լխիցյանի «Նուսարերը», Հայրապետյանի լավագույն փոտանավորները մըտնում են դասագրքերի մեջ ե մանուկների աշխարհում լայն մասսայականություն ստանում:

Խորհրդային շրջանում արդեն, Հայրապետյանն ամբողջովին նվիրվում ե մանկական գրականությանը—գրում ե, թարգմանում ե փոխագրում բանաստեղծություններ, հեքիաթներ, առակներ, աշխատակցում ե հայերեն լեզվով լույս տեսնող համարյա բոլոր մանկական-պատանեկական պարբերական հրատարակություններին («Պիոներ», «Պիոներ զեկ», «Ջոկատավար», «Կարմիր ծիլեր»:

«Հոկտեմբերիկ», «Պիոներ կանչ»), ինչպես ե մանկավարժական մամուլին («Կոմունիստական լուսավորություն», «Խորհրդային դպրոց»): Խորհրդայնացումից հետո յե, վոր Հ. Հայրապետյանը հնարավորություն ունենում առանձին գրքույկներով հրատարակելու իր մանկական գործերը, վորոնց թիվը մի քանի տասնյակի յե հասնում: Իսկ վերջին տարիները, լայն տարածում են գտել նրա կազմած այբբենարաններն ու ընթերցարանները:

Հ. Հայրապետյանի մինչ-խորհրդային շրջանի բանաստեղծությունները նյութը գերազանցապես բնությունն ե, բուսա, կան ե կենդանական աշխարհը («Ինչ սիրուն ե», «Ծաղիկները»-«Յեղևի», «Կենդանիներ», «Թռչուններ» ե այլն): Իսկ հետ-խորհրդային շրջանում գրած բանաստեղծությունների մեջ արտահայտվում ե խորհրդային կյանքը—կոլտնտեսությունը, գործարանը, նոր դպրոցը, աշակերտական-պիոներական կյանքը, խաղն ու աշխատանքը («Գարնանացան», «Բամբակազարիչ գործարանում», «Ծառատունկ», «Դեպի աշխատանք», «Բրիգադիր» ե այլն):

Գաստիարակչական խոշոր նշանակություն ունի «Կոլխոզի համար» մանկական պոեմը, վորի մեջ գրված ե մասնավորն ընդհանուրին գոհելու գաղափարը (կոմյերիտ Արայի տունն այրվում ե, սակայն նա չի լքում կոլտնտեսության բերքի պաշտպանություն գործը, վոր իրեն եր հանձնված):

Հայրապետյանը մեծ հաջողությամբ գրել ե նաև մանկական հեղափոխական յերգեր, ինչպես՝ «Լենին պապին», «Իլլիչի աչիկները», «Բանակը կարմիր» ե այլն:

Բացի ինքնուրույն գործերից, Հայրապետյանն ունի նաև բազմաթիվ թարգմանություններ, ինչպես ոուս կլասիկ գեղականությունից (Կոլով), նույնպես ե ոուս ժամանակակից մանկական գրողներից (Մարշակ, Չուկովսկի ե այլն):

Չնայած իր պատկառելի տարիքին, վաստակավոր մանկավարժն ու մանկական գրողը դեռ գրիչը ցած չի գրել ե մեծ յեռանդով շարունակում ե գրել ու աշխատել «Իր սիրելի մանուկներին» համար:

Ա. ԻՆՃԻԿՅԱՆ


Handwritten text in Armenian script, appearing as bleed-through from the reverse side of the page.

Handwritten text in Armenian script, appearing as bleed-through from the reverse side of the page.

Handwritten text in Armenian script, appearing as bleed-through from the reverse side of the page.

Handwritten text in Armenian script, appearing as bleed-through from the reverse side of the page.

Handwritten text in Armenian script, appearing as bleed-through from the reverse side of the page.



# ԲԱՆԱՍԵՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ





## ՊԱՊԱԶՈՒՍ

Չմտան վերջին ամենից շուտ,  
Այգիներում, դաշտերում  
Չալիկ-մալիկ, կուրծքը պուտ-պուտ  
Մի թռչուն է յերևում:

Ու եդ խեղճը դեռ ցուրտ սղում,  
Առանց արեխ, առանց չուստ,  
Թռչկոտում է, խնդում, կանչում,  
Թե՛ «Պապաչնւտ, պապաչնւտ»:

Յերբ գալիս է սիրուն գարուն,  
Վոր ել պետք չեն արեխ, չուստ,  
Նա տաքանում, ու չի ասում  
Ել՛ «Պապա, չուստ, պապա, չուստ»:

1910



## ԻՆՉ ՍԻՐՈՒՆ Ե...

Ի՛նչ սիրուն է անուշ գարնան  
Սենթ ու խերառ են քամին,  
Վոր սուլում է կարի վրա,  
Թխթխկացնում ապակին:

Ի՛նչ անուշ է սիրուն գարնան  
Են անձրևը խերազար,  
Կտկոտում է կարի վրա,  
Մերթ կամացուկ, մերթ վարար:

1909




### ԾԱՂԻԿՆԵՐԸ

Գարնան մեղմ քամին  
Փարվում է նախշուն  
Զուգված ծառերին,

Գոկտաում նրանց  
Շորերը սիրուն,  
Ու տանում կամաց:

Յեվ կարծես ոգում  
Թիթեռի գուլն-գուլն  
Խմբեր են թռչում:

1910



### ԳԱՐՈՒՆ

—Հայրիկ, ուր գնաց  
Մեր բակի միջում  
Են բարձր կիտած  
Զյունը փայլիլուն:

Ել ձնագնդի՝  
Ինչո՞վ կխաղամ,  
Ել իմ սահնակով  
Վորտե՞ղ կսողամ:

Աշտոն ինձ համար  
Ել ինչի՞ց պիտի  
Առաջվա նման  
Զնե մարդ շինի:

—Սուրիկ ջան, ձյունին  
Արևը տարավ,  
Իսկ այդ արևին  
Գարունը բերավ:

3009  
39



Տեսնում ես, ինչպես  
Շառերի միջում  
Ինչքան ու պեսպես  
Շտեր են թռչում:

Տեսնում ես, ինչպես  
Դուրսը տաքացել,  
Գետնի լերեսին  
Խոտեր են բակը:

Հիմի դու գրում,  
Բակում պիտ խաղաս  
Յեվ մեր պարտիզում  
Թիթեռներ վորաս:

Ձմեռն անցավ  
Այն ցուրտ ու դաժան,  
Գարունը լեկավ  
Նախշուն, անն ճան:


1909

ԾԻՏՆ ՈՒ ՏՂԱՆ

— Ծիտիկ,	— Սիրուն	Բուն եմ
Միտիկ,	Տղա,	Շինում
Ինչ ես	Գարուն	Պատի
Եղպես	Կգա	ձեղքում,
Թռչում,	Յերգով,	Չաղեր
ձչում.	Շաղկով	Հանեմ
ձիկ, ձիկ, ձիկ:	Անուշիկ,	Սիրունիկ:

1912





### ԳԱՐՆԱՆԱՑԱՆ

Գարնան մատաղ  
Վառ արևից  
Մռայլ ու ցուրտ  
Որերն անցան  
Յեվ սկսվեց  
Հանդ ու դաշտում  
Բողջեիկյան  
Գարնանացան:

Տրակտորները  
Շարքով, կարգով  
Ուժղին գոչում են  
Միաձայն.  
«Կեցցե՛, կեցցե՛  
Բողջեիկյան  
Ուրախ, կարմիր  
Գարնանացան»:

1931

### ԱԼԼՈ՛՞՞

—Ալլո՛, ալլո՛,  
Պիտներներ,  
Մեր սիրելի  
Բարեկամներ.  
Խոսում են ժիր  
Սարյակները.  
Պատրաստել եք  
Մեր բները...

1935


## ՍԱՐՅԱԿԻ ՏՈՒՆԸ

—Սարյակները մեր հերվան  
Ես ուր վոր ե պիտի գան,  
Բայց տնակը հնացած  
Պետք չի գալու ել նրանց:

Կարեն, արի միասին  
Նոր տուն շինենք սարյակին,  
Թե՛ չե՛ տեսնի տուն չկա,  
Ել մեր բակին մոտ չի գա:  
Վորդ ու թրթուր գանազան,  
Յես ինչ գիտեմ, ել ինչ բան,  
Ներս կմտնեն մեր այգին,  
Վհաս կտան անաղին:

Դե վեր, գնա մուրճը բեր,  
Յես ել՝ տախտակ ու մեխեր:

1929



## ԾԱՌԱՏՈՒՆԿ

Փնս ենք փորում,  
Տունի ենք տնկում  
Ուրախ յերգով ու կանչով,  
Վոր մեծանա.  
Ու ճյուղեր տա,  
Ծածկվի սիրուն կանաչով:

Յե՛վ յերբ ամուսն  
Արեք գա  
Իր շողերով շողշողուն,  
Ծառը սիրով  
Հանգիստ կտա  
Մեզ իր անուշ սաղերում:

1928

## ԳԱՐՈՒՆ

Զուգվել են կրկին  
Անտառ ու այգի,  
Վշտում ե ուժգին  
Զուրը գետակի:

Հավերքը սիրուն  
Համերգ են կազմել,  
Հանգում ու դաշտում  
Յերգ ու հարովել:

Թխթեաներն ուրախ  
Թռչում են դես, դեն...  
Զան, տեսքիդ մատաղ,  
Գարուն ե արդեն:

1912

## ՄԱՅԻՍ

Ճամփա ավեր սար ու դաշտեր,  
Ճամփա բացեր են հյուրին,  
Նա բերում ե ձագեր, թխթեո,  
Նախշուն որեր մեր յերկրին:

Ալվան-չալվան գորգի վրով,  
Տեսեր սվ ե գալիս ես,  
Նուշիկ-մուշիկ, նազ ու սուզով  
Սիրուն դեմքով, ժպտերես:

Գուրս են գալիս նրա առաջ  
Գանուկ, թռչնիկ, մարդ, ծաղիկ,  
Հագար գույնի շորեր հագած,  
Յերգ ու տաղով գեղեցիկ:

Ճամփա ավեր ծառեր ու խոտ  
Մեր անուշիկ են հյուրին.  
Նա մայիսն ե ցողոտ, շաղոտ,  
Մեր բուրբի սիրելին:

1910

Պ Ա Տ Կ Ե Ր

Լուսնյակի մի շող,  
Թաքուն, գողեգող,  
Գիշերվա կիսին,

Մտել ես սենյակ  
Յեւ ընկել շիտակ  
Տղի յերեսին:

Շողը շողշողում,  
Դեմքին ես փարում,  
Համբուրում քնքուշ,

Տղան եւ քնում,  
Յերազ ես տեսնում  
Ու ժպտում անուշ:

1914

ՈՒՌԵՆՈՒ ՀՅՈՒՐԵՐԸ

Գյուղին մտիկ  
Բլրի լանջից,  
Զուլալ աղբյուր  
Ե բղխում.  
Գլգլալով  
Ու խնդալից,  
Դեպ ստորոտ  
Շտապում:

Են աղբյուրի  
Ակունքի մոտ  
Մի դարավոր  
Ուռենի,  
Զարդարել ե  
Լանջը քարոտ,  
Քնքուշ, անուշ  
Հով ունի:

Յեւ կեսորվա  
Տաք ու տոթին  
Իր սիրունիկ  
Գառնեքով,  
Մոտ ես գալիս  
Են աղբյուրին

Գառնարածը  
Շտապով:

Ծառն անուշ  
Սլալոցով,  
Զով ե անում  
Հյուրերին.  
Քոչունները  
Ծլվոցով,  
Քուն են բերում  
Գառներին:

Գառնարածն ել  
Շվին բերնին,  
Թիկն տված  
Ուռենուն.  
Զայնակցում ե  
Քոչուններին,  
Գլղոցին,  
Մեղմ քամուն:


1909

## ԾԻՏԻԿԻՆ

Ե՛յ դու, ծիտիկ,  
Իմ սիրունիկ,  
Քուն մի մտիր,  
Զգուշ յեղիր,  
Ուրուրը, ահա,  
Դիտում ե քեզ:

Յեթե իջնի  
Ու քեզ տանի,  
Ո՞վ ինձ համար  
Ել անդադար  
Յերգեր անուշ  
Կասի քնքուշ:

1910



ԱՐՏՈՒՏԻԿ

Այ արտուտիկ  
Փոքրիկ թռչնիկ,  
Պուտպուտուրիկ  
Սիրունիկ.  
Արշալուսին  
Հովիվներին  
Բարի լույս ես  
Ավետում,  
Սիրուն հանդում,  
Կանաչ դաշտում  
Սոխակի տեղ  
Յերգ ասում:

1910

Գ Ի Շ Ե Ր

Գեղեցիկ ու զով  
Գիշեր ե պայծառ,  
Անուշիկ քնով  
Քնած ե աշխարհ:

Ծառերը մեղմիկ  
Քանուց որորվում,  
Հեզիկ ու նազիկ  
Յերգ են սլալում:

Գետափին, թե ուր  
Վույվույում ե բուն,  
Գետակն ել տխուր  
Հրաժեշտ ե չերգում:

Իսկ լայնատարած  
Յերկնակամարով,  
Լուսինն ե կամաց  
Անցնում սահելով:

Աստղերն ել սիրուն  
Փայտով փայլում,  
Իրենց թագուհուն  
Ճամփա չեն գնում:

Գեղեցիկ ու զով  
Գիշեր ե պայծառ,  
Անուշիկ քնով  
Քնած ե աշխարհ:

Ու քնած յերկրին  
Գետակն ու բուն  
Յերգով միասին  
Որոր են ասում:

1910

## ԱՌԱՎՈՏ

Զիլ կանչն աբլորի  
Պատոււմ ե կամաց,  
Խավար աշխարհի  
Քողը անթափանց:

Յեվ նրա ձայնից  
Շտապ, սարսափած,  
Աստղերն յերկնքից  
Գլորվում են ցած:

Հույս աստղը միայն  
Յերկնքի ծայրում,  
Դեռ քաջի նման  
Յորում ե, փայլում:

Գետակի, բվի  
Համերգը լոււմ,  
Զարթնող աշխարհի  
Խուլ ձայնն ե ծնվում,

Յեվ շառագունած  
Վառ արևելքում

Հոգնած ու դադրած  
Հույս աստղը մարում:

Ապա վեհ, հանդարտ,  
Շողուն, շողշողուն,  
Փառավոր, հպարտ  
Արվին ե յեկնում:

1910

## ՍԻՐՈՒՆ ԳԻՇԵՐ

Սիրուն գիշեր...  
Հունի շողեր  
Պար են բռնել  
Ջրի հետ.  
Գեան ե հոսում,  
Որոր ասում,  
Փսխում ե  
Հունի հետ:

Բամին փշում,  
Ջուրը հուզում,  
Խաղ ե անում  
Գետի հետ.  
Արծաթ ջրեր,  
Հունի սովեր  
Համբուրվում են  
Իրար հետ...

1910

## ԱՇՈՒՆ

Կրկին աշուն է,  
Աշուն,  
Այգին դարձել է  
Նախշուն:  
Տանձ ու խնձոր՝  
Ծառերից  
«Ճիկ» են անում,  
Կանչում ինձ:  
Ընկերներով  
Մենք այգում,  
Հասուն միրգ ենք  
Հավաքում.  
Համ ուտում ենք,  
Համ ոգնում:

1929



**ԴԵՊՒ ԱՇԽԱՏԱՆՔ**

*Որերն անցան հանգստի,  
Յեկավ քաղցրիկ Սեպտեմբեր,  
Վորին վաղուց ամենքս ել  
Սպասել ենք անհամբեր:*

*Կրկին դպրոց գնանք մենք,  
Սովորենք ու աշխատենք.  
Աշխատանքն է, վոր մարդուն  
Յեվ մարդում է, և՛ կրթում:*

1928



## ՇՈՒԿԱՆ ԱՇՆԱՆ

Զարգարվել ե մեր շուկան՝  
Ինչե՞ր ասես, վոր չկան.  
Տանձ ու խնձոր, սերկևիլ  
Փշատ, ընկույզ և տխիլ  
Բա խաղողը դու՛նց գոլյն,  
Սպիտակ, կարմիր, վոսկե գոլյն,  
Բա են դեղին գազարը,  
Վոր նախշում ե բազարը,  
Բա են դեղ-դեղ կանաչին  
Խանութների առաջին...

Վո՞ր մեկն ասեմ. մեր շուկան  
Աննձան ե, աննձան:

1928

## ԱՇՆԱՆ ՏԵՐԵՎԸ

— Մրսում եմ, մրսում,—  
Ծառի վրայից  
Տերևն ե սրսում:—  
Քամի ջան, քամի,  
Շուտ յեկ ինձ ոգնի,  
Վոր ծառից իջնեմ՝  
Սպիտակ ու փափուկ  
Վերմակով ծածկվեմ:

1910



## ԾԻՏՆ ՈՒ ԾԻԾԵՌՆԱԿԸ

— Արի մեզ հետ  
Թռչենք հարավ,  
Մոայլ ու ցուրտ  
Աշուն յեկավ:

Մերկ ծառերին  
Պիտի մնաս,  
Ձմռան որին  
Սոված դողաս:

— Թներ չունեմ  
Քեզ պես ուժեղ,  
Հարավ թռչեմ  
Ձեզ հետ մեկտեղ:

Ձմռան ցրտից  
Ձեմ վախենում,  
Կեր ել կլինի  
Ես բակերում:

1911


## ԱՇՆԱՆ ՅԵՐԳ

Տերևները քամու հետ  
Պար են բռնել առաջ, յետ,  
Խշխշում են ու յերգում  
Մեր զարգարված պուրակում.  
— Գալի բարի, այ աշուն,  
Ի՞նչ սիրուն ես, ի՞նչ նախշուն:

Գետակը գիժ ու պղտոր  
Շտապում է դեպի ձոր,  
Քչքչալով ձորակում  
Փրփրում է ու յերգում.  
— Յես գնացի, ջան աշուն,  
Ի՞նչ սիրուն ես, ի՞նչ նախշուն:

Կռունկները կռկռան  
Կռկռալով վեր թռան,  
Դեպի հարավ ձգվեցին,  
Կռկոացին, յերգեցին.  
— Մնաս բարով, այ աշուն,  
Ի՞նչ սիրուն ես, ի՞նչ նախշուն:

1931



## ԱՇՈՒՆ

Դաշտ ու այգի դեղին հագան,  
Ծառ ու ծաղիկ մերկացան,  
Թռչունները յերամ-յերամ  
Մեր աշխարհից հեռացան:

Որը մռայլ, ցուրտ ու տխուր  
Բարակ անձրև ե մաղում,  
Մեզն ե պատել դաշտ ու բլուր,  
Ել մարդ չկա հանդերում:

Չար ազդավր ծառի վրից  
Չմտան յերգն ե կռկռում,  
Մարդ, անասուն տուն ու բնից  
Ծերուկ հյուրին սպասում:

1909

## Զ Մ Ե Ռ

Աշնան վերջին քամին լեկավ,  
Մրբեց դաշտեր, ձոր ու լեռ  
Յեվ ամենքին համբավ բերավ  
Թե՛ դալիս ե ցուրտ ձմեռ:

Ու մռայլեց յերկինք, գետին,  
Մեզը պատեց դաշտ ու սար,  
Յուրտը յեկավ, տիրեց յերկրին,  
Ճերմակ հագավ մեր աշխարհ:


Մարդ, անասուն ծերուկ հյուրից,  
Վախվախելով մտան տուն.  
Գետն ել լռեց ցրտի անից,  
Ծառ ու ծաղիկ մտան քուն:

1909

## Զ Մ Ե Ռ

Բարև, բարև,  
Սիրուն ձմեռ  
Բարով լեկար  
Իսկ մեզ մոտ:  
Այդ ուր էլիք  
Այսքան որեր՝  
Մնում էլինք  
Քեզ կարոտ:  
Փաթիլ-փաթիլ  
Զյունը թափիր,  
Սառույց կապիր  
Պսպղան,  
Ուրախ-ուրախ  
Փողոց դուրս գանք,  
Առած սահնակ  
Ու սղղան:

1929



## Մ Ա Ք Ո Ւ Ր Ո Ւ Ո Ւ Մ

Փափուկ, սպիտակ ձյուն է լեկել  
Ծածկել փողոց ու ծառեր,  
Յեկեք, լեկեք, ջան մանուկներ,  
Խաղանք ձմռան մեր խաղեր:

Ողբ մաքուր, սառն ու պայծառ,  
Յեկեք խաղանք, պաղի տանք,  
Վաղուց է վոր մենք չենք տեսել  
Այսպես, սիրուն յեղանակ:

Խաղ աներով մաքուր ողում  
Ուժ, լեռանդ ենք հալաքում,  
Խորհուրդների լերկրի համար  
Աշխատանքի պատրաստվում:

1928

## ՆՈՐ ՏԱՐՎԱ ՆՎԵՐԸ

— Այ նոր տարի,  
Գալի բարի,  
Դու մեզ նվեր  
Ի՞նչ ես բերել:

Արդյոք խնձոր,  
Չիր ու սալոր,  
Թե տանձ ու նուռ,  
Չամիչ մի բուռ:

Սրա նման  
Ուրիշ լավ բան  
Ել չգտա  
Իբրև ընծա:

Գիրքն է ապի  
Մտքեր բարի,  
Յերգ, ցնծություն,  
Խաղեր սիրուն:

1909

## ՄԵՐ ՏՈՆԱԾԱՌԸ

Ահա և մի տանածառը,  
Կանգնած հպարտ ու հսկա,  
Վորքան ուղիղ ու յերկար է,  
Ծայրին աստղ հնդաթեվա:

Վրան վորքան ոգանավ կա,  
Պարաշյուտ ու խաղալիք,  
Վորքան սիրուն, փայլուն իրեր  
Յեվ լապտերներ զեղեցիկ:

Ի՞նչ լուսավոր ու պայծառ են  
Ճրագները Իլիչի,  
Վորքան պայծառ փայլվում են  
Կանաչ ճյուղերի միջին:

Իսկ մենք ուրախ, շրջան կազմած,  
Պար ենք գալիս, պտտվում,  
Յեր նոր տարվա անուշ յերգն է  
Մեր դանլիճում զիլ լինում:

## Տ Ո Ն Ա Մ Ա Ռ

Զարդարվել են դու պայծառ,  
Մեր սիրելի տոնածառ,  
Մենք կպարենք ու կերզենք,  
Ձենք մուսանա քեզ յերբեք:

Այսքան ուրախ կյանքը մեր  
Ստալինն է մեզ ավել,  
Յեվ հայրական խնամքով  
Մեզ փայփայել ամեն օր:

Դրա համար չեկեք մենք  
Միշտ զերազանց սովորենք,  
Լինենք խելոք, կարգապահ  
Յեվ չունենաք բացակա:

Վոր համբավը մեր լսի  
Ստալինը և ասի,  
«Ապրեք, խելոք մանուկներ,  
Այդ ինչ լավ եք սովորել»:

1937



Ա Ր Ձ Ի Ք Ո Ւ Ն Ը

Ճամփից հեռու, մի վորջում,  
Ուր ցուրտ, քամի չի փչում,  
Քուն ե մտել մինչ գարունե  
Հսկա արջ մտխրագունե:

Տաք ու չոր ե են վորջում,  
Ցուրտ ու քամի չի փչում:  
Յե՛վ նա, քնած են փոսում,  
Մեղր ե տեսնում յերազում,  
Ռամփում ե ու փսսում,  
Յե՛վ իր թաթերը ծծում:

1930





ՅԵՂԵՎՆԻՆ

Այս Աշուն ե: Բայր ա զամ  
Շատերը տկարաց ա պոյն  
Տխուր անասունս,  
Մրտուհէն, դողուն,  
Յեղևնին միայն  
Կանաչով պատած  
Կանգնած է մենակ  
Ճուրտ քանու զինաց: 0801

1910

ԶՄՌԱՆ ՎԵՐՁԸ

Շուտով պայծառ յերկնքից  
Սրեգակը վառվումն,  
Վերջ կընի գիծ մարտի  
Անձրեկներին ու ջրածուն:

Յե՛վ կղարթունս խոտ, ծաղիկ,  
Շոր կհագնեն գեղեցիկ,  
Թռչունները ճշխան  
Նորից մեզ մտա սլախի դան:

1929



— Յնս սուրբ ուր մեծանս,  
Քեզն հոգնաւ հոսքանս,  
Յարն ըրին ու պարանս  
Արք, տարն, ու ինչնս



ՅԵՂԵՎՆԻՆ

Աշուն է: Բոլոր ու զան  
Ծառերը տկարացնում  
Ճյուղը անտառում  
Մրսում են, դողում,  
Յեղևին միայն  
Կանաչով պարծանում  
Կանաչանք է մենակ  
Ճուրաբանը դիմաց: 1930

1910

ԶՄՌԱՆ ԿԵՐՁԸ

Շուտով պայծառ յերկնքից  
Սրեզալը վառվում,  
Վերջ կընի գիծ մարտի  
Մանրեկներին ու ջանուն:

Յե՛վ կղարթուն խոտ, ծաղիկ,  
Շոր կհագնեն գեղեցիկ  
Թռչունները ճվիսն  
Նորից մեզ մաս պիտի դան:

1929



## ԶՈՐՍ ՅԵՂԱՆԱԿ

— Յես մանուկ եմ ծաղկավետ,  
Զգեստներս հոտավետ,  
Դեմքս պայծառ, ժպտերես:  
Ասեք, տեսնեմ՝ ո՞վ եմ յես:

— Դու զարունն ես ցանկալի,  
Սիրուն զարզը աշխարհի,  
Բերում ես վարդ, մանուշակ,  
Անթիվ յերգեր ու թռչնակ:

— Պատանի յեմ տոթակեզ,  
Սյրում եմ ձեռք ու յերես,  
Ընծաներ եմ բերում ձեզ:  
Ասեք, տեսնեմ՝ ո՞վ եմ յես:

— Դու ամառն ես արևառ,  
Ունես բարիք անհամար  
Յեվ արեվոս քո ծոցից  
Առատ բաժին ես տալիս:

— Յես մառյլ եմ, անձրևոտ,  
Դեմքս խոհուն, մաքածկոտ,  
Զարդս դեղին ու պեսպես:  
Ասեք, տեսնեմ՝ ո՞վ եմ յես:

— Դու աշունն ես հովասուն,  
Շորդ սիրուն ու նախշուն,  
Բերում ես մեզ առատ միրգ,  
Անուշ, հոտով ու քաղցրիկ

— Ալևոր եմ սպիտակ,  
Բերում եմ բուք ու սահնակ,  
Կարմիր ներկում թուշ, յերես:  
Ասեք, տեսնեմ՝ ո՞վ եմ յես:

— Դու ձմեռն ես ցրտաբեր,  
Փռում ես տաք վերմակներ,  
Վոր արմատը բույսերի  
Յրախց, քամուց չսառչի:

1914

— Բարեկամս եմ քեզին —  
Երբեք մի անգամ  
Երբեք մի անգամ  
Երբեք մի անգամ

— Երբեք մի անգամ —  
Երբեք մի անգամ  
Երբեք մի անգամ  
Երբեք մի անգամ

### Բ Բ Ի Գ Ա Դ Ի Ր

Ամբողջ տարվա ընթացքում  
Չունեն վնչ մի ուշացում:  
Հարվածային եմ, գլխեք,  
Ինձ պատվի չհարձեք:

Բրիգադիր եմ, բրիգադիր,  
Գործերիս միշտ ուշադիր:

Դասի ժամին միշտ լսում,  
Ցերգում, խաղում, վաղձում,  
Աշխատում եմ հյուսնոցում  
Յե՛վ միշտ տանում սոցմրջում:

Բրիգադիր եմ, բրիգադիր,  
Գործերիս միշտ ուշադիր:

1929

### Հ Ի Վ Ա Ն Դ Փ Ի Ս Ի Կ Ը

— Բժիշկ, քննիր սրտիկը,  
Հիվանդ ե իմ փխտիկը,  
Ունի թոքի բորբոքում,  
Կարծեմ արյուն ե թքում:

Գիշեր, ցերեկ յես արթուն.  
Նրա մտին յե՛մ նստում,  
Բան եմ պատմում, վար լսի,  
Ծածկում, վոր նա չմխի:

Ի՞նչ տամ նրան. համով դե՞ղ,  
Թարմ ու համեղ կարագ յե՞ղ,  
Քաղցր հալվա ու համի՞չ,  
Թե՛ թող ուտի ամեն ինչ:

Հիմի ծածկած գլուխ, վո՛ւ  
Նրան բերել եմ քեզ մոտ,  
Բժիշկ, քննիր սրտիկը,  
Մեղք ե իմ լավ փխտիկը:

1929



## Ս Ա Վ Ա Ռ Ն Ա Կ Ը

Մեան, անան, նայիր, վերից,  
Թեևրը լայն բացած, պարզած,  
Սովառնակն և սահում ողով.  
Հսկա, հպարտ ու անվրդով:

Թռչունները նրա անից  
Լեզուպտտառ ցած են գալիս,  
Իսկ նա հպարտ ու անվրդով  
Սովառնում և կապույտ ողով:

1928


## Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

Վնչ պատրույգ կա, վնչ ել նավթ,  
Մի աղակի յե անգարդ,  
Վիզը բարակ, փորն ուռած,  
Սպիտակ թելից կախ արած:

Յերբ գալիս և իրիկուն,  
Սրբին մարում յերկնքում՝  
Չըխկ...

Լույս և տալիս նա պայծառ.  
Իր շողերով վտակեվառ:

1928





Ճ Ա Ն Ճ Ը

Թշամին և մեր ցեղի,  
Թե քաղաքի, թե դեղի.  
Աղան ու կեղաը փոսներին  
Տարածում և թույն ու մահ:  
Այդ աներես ճանճերին  
Կտորեցեք անխնա:

1926

8801



Ա Ն Տ Ա Ռ Ը

Անտառի պես պճնասեր  
Ել ուրիշը կլինի.  
Ունի սիրուն հազուսաներ  
Ու զարդարանք գեղանի:

Մին ել տեսար նա կանաչ  
Շորեր հազած, զարդարուն,  
Նազ ու տուզով ձախ ու աջ  
Տատանվում և սլալում:

Մին ել գեղին շոր մտած,  
Տեղ-տեղ կարմիր ու նախշուն  
Ապա մերկ ու գլխաբաց  
Որորվում և հառաչում:

Մին ել տեսար՝ շիփ-շիտակ  
Կանգնեց հազավ ճերմակ շոր,  
Կախեց փայլուն գլխառ, մանյակ,  
Կանգնեց անշարժ ու մուր:

1912

ՀՅՈՒՍՆՈՅՈՒՄ

ՓՈՒՍԳՐՈՒՅՈՒՆ)

Վ — Ընկեր վարպետ,  
Տախտակ ե պետք  
Մեզ հինգ կտոր  
Հարթ, բարակ.  
Տախտակ չունենք,  
Սղոց չունենք,  
Պետք ե շինենք  
Սավառնակ:

— Լավ, յերեխեք,  
Դե մտա յեկեք,  
Տեսեք՝ դուք ել  
Սովորեք:

Վարպետը ծեր  
Իսկույն առավ  
Իր դազգահից  
Մի սղոց,  
Առաջ ու յետ,  
Առաջ ու յետ.  
Խը՛ն, խը՛ն, խը՛ն, խը՛ն  
Խոխոց:


Վարպետը ծեր  
Առավ ունդան  
Ու դեն դրեց  
Սղոցը,  
Առաջ ու յետ,  
Առաջ ու յետ,  
Գցեց՝ խը՛ն, խը՛ն,  
Խը՛ն:

— Հիմի, առեք,  
Չան յերեխեք,  
Հինգ լավ տախտակ  
Հարթ, բարակ.  
Առեք, տարեք  
Ու շինեցեք  
Մի լավ սիրուն  
Սավառնակ:

1930

ՓԻՍԻԿԻ ԳԱՍԸ

Մասին նստել  
Հատակին,  
Դաս եր, տալիս  
Փիսիկին.  
— Այ, փիսիկ ջան,  
Մի լավ տես  
Նկարել են  
Ինձ ու քեզ:  
Սա յեղ տուն ե:  
Ասա՛ տուն:  
Ի՞նչ ես նստել  
Խուփուփու:  
Սա յեղ ծառ ե;  
Սա՛ մրգեր,  
Մեր այգուցն են  
Հավաքել:  
Սա յեղ տուփ ե,  
Ասա՛ տուփ:  
Ի՞նչ ես նստել  
Աչքդ խուփ:  
Գնա՛ քնիք,  
Փիսիկ ջան,  
Վազն արի  
Նոր դաս տամ:



ՇՈՑԵՐ

(ՓՈՒՍԱԴՐՈՒ-ՅՅՈՒՆ)

Ձեռնոցը ձեռքիս,  
Ակնոցն աչքիս  
Շոֆեր եմ յես  
Սրատես:

Ղեկը ձեռքիս շարունակ  
Սլանում եմ համարձակ:

Փողին թռչում,  
Բամին ճչում,  
Փողը հնչում,  
Փնչում,  
Թնչում  
Մեքենան,

Կտրում ճամփան  
Անսահման:

Ահա անտառ,  
Հովիտ ու սար,  
Չորեր ու դաշտ  
Մի ակնթարթ  
Յերևում են  
Ու կորչում:

Իսկ յերբ գեմից  
Սայ ե գալիս՝  
—Տու սո՛ւ, սու սո՛ւ,  
Ինձ ճամփա սուր,—

Զիլ և ուժգին  
Փողն ե հնչում,  
Ու մեքենան  
Թռչում կրկին,  
Սայլին թողնում  
Ճամփի կողքին:

## ԲԱՄԲԱԿԱԶՏԻՉ ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ

Զին, Ղին, Ղին, Ղին...  
Ես քանի Ղին  
Ես տան միջին...  
Մի սև հսկա,  
Մի աժղահա  
Դունչը ծռած,  
Բերանը՝ բաց:

Կլանում ե իր յերախով  
Են բամբակը հնդով, կեղտով,  
Կլանում ե, վերև տանում,  
Հունգ ու կեղտից դտում, մաքրում:

Յե՛վ մաքրում ե բամբակն արագ,  
Վոր թե՛ մանեն հաստ ու բարակ,  
Թելեր մանեն չթի համար,  
Հնդից շինեն, քուսպ ու սճառ:

1928

ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

Կենդանի յե վայրենի,  
Քնքուշ ու թանկ մորթ ունի:  
Ինքն ազան, խորամանկ,  
Բունն ունի հազար ծակ:

Յես մի անգին կենդանի,  
Ունեմ անթիվ թշնամի:  
Շատ վախլուկ եմ ու պոչատ,  
Կրծողներին հարազատ:

Մարդու հոտի ու դոան  
Պահապանն եմ աննման:  
Յեվ մշակ եմ, և՛ վորսկան,  
Ամեն բանի պետքական:

Միրելին եմ ամեն տան,  
Մանուկներին բարեկամ:  
Մուշտակս տաք ու քնքուշ  
Մկնիկների աչքի փուշ:

Տկար մարմնիս լավ պաշտպան  
Փշեր ունեմ աննման,  
Մթնով հլուրն եմ դաշտերի  
Յեվ թշնամին ոճերի:

Մեծ ծառերի փշակում  
Յես իմ պալատն եմ շինում  
Յեվ վոստերի կատարին  
Կրծում ընկույզ ու կաղին:

Յես սողուն եմ թունավոր,  
Ինքս յերկար ու կտր,  
Առանց վոտի յես արագ  
Սլանում եմ համարձակ:

Յես արքան եմ բոլորի,  
Չայնս ուժեղ, ահուկի,  
Ինձնից վախչում են, սաղսում  
Մարդ ու զազան, անասուն:

Կենդանի յեմ մարդու պես,  
Ունեմ ձեռք, վոտ ու յերես,  
Տունս՝ տաքուկ անտառը,  
Մեծ ծառերի կատարը:

Թոշոր եմ, մեծ յեղան պես,  
Մարդու մոտ եմ ապրում յես,  
Տալիս եմ ձեզ բոլորիդ  
Սպիտակ, անուշ խմելիք:

Ուժեղ եմ յես, վայրենի,  
Ինձ պես թուխք ո՞վ ունի,  
Յեզան, կովին տեսնելով  
Մեջքն եմ շարդում մի գարկով:

Այգում, դաշտում, պուրակում  
Անուշ հյուլթ ենք հավաքում,  
Համեղ բան ենք տալիս ձեզ,  
Դուք միջատ եք ստում մեզ:

Թ Ռ Զ Ո Ւ Ն Ն Ե Ր

Մի թռչունն կա պատլիկ,  
Մարմին ունի կյորիկ,  
Կտուցը կարճ ու հաստլիկ,  
Ճկճկում է սիրունիկ:

Մի թռչունն կա պուրակում,  
Ինքը պատիկ, մոխրագույն,  
Քիչ ենք տեսնում մենք նրան,  
Բայց յերգն է աննման:

Մի թռչունն կա շուտ չվող,  
Ցանկալի գարուն բերող,  
Վորս է անում թռչելիս,  
Բունը շինում է կավից:

Մի թռչունն կա սպիտակ,  
Վիզը յերկար ու բարակ,  
Վտաները ձիգ, այլանդակ,  
Թռիչք ունի համարձակ:

Մի թռչունն կա կչկչան,  
Պոչը յերկար, տմբտմբան,  
Թե վարժեցնեք դուք նրան,  
Կխոսի մարդու նման:

Մի թռչունն կա գույնզգույն,  
Նա խոսում է, չի յերգում,  
Ապրում է տաք աշխարհում,  
Մեզ մոտ հաճախ չի լինում:

Մի թռչունն կա լույսով կույր,  
Չայն է հանում նա տխուր,  
Վորս է անում գիշերով  
Իր սոսկալի ճանկերով:

Մի թռչունն կա յերկարպոչ,  
Չի սիրում տուն ու խոռոչ,  
Չվում է միշտ ամռան հետ,  
Բունն չի շինում նա յերբեք:

Մի թռչունն կա հավի չափ,  
Սիրած տեղն է լեռ, քարափ,  
Համեղ միս է տալիս մեզ,  
Լավ յերգում է, բայց անտես:

Մի թռչունն կա կռավան,  
Չգուշ է գողի նման,  
Գիշակեր է, անկշտում,  
Մարդիկ նրան չեն սիրում:

Մի թռչունն կա հորթի չափ,  
Նա չի սիրում լեռ, քարափ,  
Անապատում արևկեզ  
Վազ է տալիս ձիու պես:

Մի թռչունն կա վիթխարի,  
Բնակիչն է ամպերի,  
Բուն է շինում ժայռերում,  
Հորթ ու գառներ գողանում:

ՅԵՐԵՔ ՓԻՍԻԿՆԵՐԻ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Մեր սև կատուն  
Նազանի  
Յերեք փոքրիկ  
Չազ ունի:  
Մինը փափրիկ,  
Սպիտակ,  
Կասես՝ պստիկ  
Նապաստակ,  
Մինը սևիկ  
Ու ճարպիկ,  
Դունչն ու պոչը  
Գեղեցիկ,  
Մինը չալիկ,  
Համարձակ,  
Աչիկները  
Վառ ճրագ:

\*  
\*\*

Առավոտից  
Իրիկուն  
Սենյակներում  
Ու բակում

Թռչկոտում են,  
Վազվզում,  
Գլորում ու  
Քաջքշում  
Կամ կծիկը  
Տատիկի,  
Կամ տիկնիկը  
Սաթիկի,  
Կամ գնդակը  
Անիկի,  
Կամ սայլակը  
Վանիկի:  
Մին էլ գնում  
Յեռ ու յեռ,  
Սաղում իրենց  
Պոչի հեռ,  
Նստում տատի  
Չուստի մեջ,  
Չեն վախենում  
Տատից հեջ:  
Փշտացնում  
Ու ցատկում,  
Սաղում պապի  
Գտակում:

1929

ՀԱՍՄԻԿԻ ՆԱՄԱԿԸ

— Ե՛ր, գիժ փիսիկ,

Մի խանգարի՛ր,  
Հանգիստ նստի՛ր  
Իմ կողքին.  
Ձե՛ս տեսնում, վոր  
Գրիչ առեր,  
Գիր եմ գրում  
Տատիկին:

Յե՛վ Հասմիկը  
Գրեց, գրեց,  
Լցրեց ամբողջ  
Մի յերես,  
Մին ել նայեց,  
Ապա ծալեց  
Ու ծրարի  
Մեջ գրեց:

— Պրծա՛, փիսիկ,  
Իմ սիրունիկ:  
Ես ել հասցեն.  
Լենինական,  
Փողոց համար  
Քսան ու վեց,—

Մի փողոց ե  
Հայն ու մեծ,—  
Ես ել նրա  
Տան համարը՝  
Ճիշտ քսան,  
Ես ել տատիս  
Ազգ-անունը՝  
Ե՛ս Ֆահրադյան,  
Ե՛ս Յեղսան:

\*\*\*

Յե՛վ Հասմիկը,  
Լավ աղջիկը,  
Յե՛լավ նամակն  
Ուղարկի,  
Գցեց պատի  
Արկղը փոստի,  
Գնաց դպրոց  
Մարզանքի:

Ու քիչ հետո,  
Արագ-արագ  
Յե՛կավ կառքը  
Միաձի,  
Վոր արկղի  
Նամակները  
Տանի փոստը  
Ու հանձնի:

Փոստում տատի  
Գիրը գրին  
Պայուսակում  
Ահագին,

Կառքով տարան  
Մինչ կայարան,  
Տվին մեկնող  
Գնացքին:

\*\*\*

Ու սէ, ու սէ,  
Ինձ ճամփա տո՛ւր,  
Ու ժգին դոչեց  
Մեքենան,  
Յե՛վ գնացքը  
Առաջ անցավ,  
Անիմները  
Սլացան:

Եսպես անցավ  
Են գնացքը  
Կոլխոզներով  
Ընդարձակ,  
Յե՛վ բամբակի  
Լալն դաշտերով,  
Այգիներով  
Լալնարձակ:

Գնաց, անցավ  
Ուլուխանյու,   
Եջմիածին  
Կայարան,  
Յե՛վ Հոկտեմբեր,  
Բամբակաբեր,  
Վոր ունի մեծ  
Գործարան,  
Հետո Արաքս  
Յե՛վ Ալազյազ

Ու Անիւ,  
Վոր այնքան շատ  
Պեմզա ունի  
Թանկագին:

Յե՛վ լերք Ադրե  
Կայարանից  
Շոգեկառքը  
Փնշարով  
Գնաց դեպի  
Լենինական,  
Ուրախ լերգեր  
Յերգելով,  
Նրան հեռվից  
Բարև տվեց  
Լենտեքստիլը  
Սուլոցով:

Լենինական  
Կայարանում  
Պայուսակը  
Հանեցին,  
Կրկին անգամ  
Կառքով տարան,  
Ելի փոստին  
Հանձնեցին:

\*\*\*

Մյուս որը  
Փոստատարը,  
Կողքին կապած  
Պայուսակ,  
Ման եր գալիս

Փողոց-փողոց,  
Հանձնում լրագիր  
Ու նամակ:

Յեվ յերբ վոր նա  
Գնաց հասավ  
Քսանուվեց  
Փողոցին,  
«Յեղսան Բաջի  
Ֆահրադջանի  
Տունը են ե», —  
Ասացին:

— Նամակն ու մնից,  
Ընկեր ցրիչ —  
Գոչեց տատը  
Շփոթված:  
— Դա Դանիելյան  
Հասմիկիցն է,  
Յերեվանից, —  
Նա ասաց:

— Վնյ, ազիզ շան, —  
Գոչեց տատը —  
Յեվ նամակը  
Ստացած,  
Կրժքին սեղմած  
Ուրախ-ուրախ  
Մտավ սենյակ  
Ու կարգաց:

«Իմ լավ տատի,  
Քաղցրիկ տատի,  
Կարոտ եմ քեզ,

Անձման,  
Ի՞նչ կլինի —  
Գիրս կարգաս,  
Վեր կենաս, գաս  
Յերևան:

Իմ լավ տատի,  
Շաքար տատի,  
Պիոներ եմ  
Հիմի լես,  
Դպրոց գնում,  
Մարզանք անում,  
Գիր եմ գրում  
Մեծի պես:

Ես տարի չեմ  
Գիտես տատի,  
Քանի՞ անգամ  
Դպրոցում  
Աշխատանքի  
Պայման կապել  
Ու տարել եմ  
Սոցմրցում»:

Կարգալուց հետ  
Մի անգամ ել  
Պաչեց գիրը  
Հասմիկի,  
Իսկույն նստեց,  
Գրիչ առավ  
Պատասխանը  
Ուղարկի:

ԿՈՆԽՈՉԻ ՇԱՄԱՐ

I

Կենսոս շրջանի  
Մի փոքրիկ գյուղում  
Գիշերն եր իջել,  
Սավաբն եր տիրում  
Յեվ կոլխոզային  
Կալին պահապան  
Պահակ եր կանգնել  
Կոմյերիա Արան:

Փչում եր քամին,  
Շուրջը մութ, խավար,  
Թափվում եր, թափվում  
Անձրևը վարար,  
Փայլակ ու կայծակ  
Մթնած չերկնքում  
Ոձերի նման  
Կովում են, ճալթում:

Գյուղի լույսերը  
Վազուց չքացել  
Միայն Արալի  
Լույսն է մնացել  
Քուլըր՝ պիտներ

Հարկում վերևի,  
Կոլխոզի թերթն և  
Գրում չերևի:

Կոմյերիա Արան  
Աչքերով արթուն  
Կանգնած է հանդի  
Գյուղամերձ դիրքում,  
Վոր իր կոլխոզի  
Կուլակ թշնամին  
Մի վսաս չատ  
Կոլխոզի կալին:

II

Հանկարծ վերևում  
Մի ուժեղ վորոտ՝  
Կայծակն է փայլում  
Արալի տան մոտ,  
Յեվ մի ոձաձև  
Հրեղեն շղթա  
Իջնում է ուլիդ  
Նրա տան վրա:

Յեվ լեզուները  
Այ ու բոցեղեն  
Արալի տունը  
Պատեցին արդեն  
Յեվ բոցն ու ծուխը  
Սառնված միասեղ,  
Ընդհանուր ուժով  
Գործում են, այնտեղ:

Իսկ կոմցերիտը  
Աչքերով արթուն  
Կանգնած է հանդի  
Գյուղամերձ դիրքում,  
Վոր իր կոլխոզի  
Կուլակ թշնամին  
Մի վնաս չտա  
Կոլխոզի կալին:

### III

— Արան, այ Արա,  
Ինչո՞ւ չես կանգնել,  
Գոչում է ցածից  
Քույրը պիտներ,—  
Տունն այրվում է,  
Ցած արի ու յեկ,  
Միջի իրերը  
Գուցե ազատենք:

— Եդ վո՞նց կլինի,  
Խելոք պիտներ,  
Պահակ եմ, դիտես,  
Ինձ դեռ չեն փոխել:  
— Դե թող՝ չես կանգնեմ,  
Դո՞ւ գնա մենակ,  
Ել մի կորցնի  
Իզուր ժամանակ:

— Չե, չի կարելի:  
Մեր նենգ թշնամուն,  
Իմ ազիզ քույրիկ,

Լավ չես ճանաչում.  
Առիթից ոգոված  
Դեզը կվառի,  
Կոլխոզի գլխին  
Չարիք կբերի:

Յես չեմ հեռանա:  
Ի՞նչ փոքրիկ ես դեռ,  
Ես վառ գիշերին  
Չես կարող հսկել:  
Հասիք ու ասա  
Մեր նախագահին,  
Թե, «Մարդ ուղարկիր՝  
Փոխիր Արային»:

### IV

Փչում է քամին,  
Շուրջը մութ, խավար,  
Թափվում է, թափվում  
Անձրևը վարար,  
Փայլակ ու կայծակ  
Մթնած յերկնքում  
Ոձերի նման  
Կովում են, ճալթում:

Կոմցերիտ Արան  
Աչքերով արթուն  
Կանգնած եր հանդի  
Գյուղամերձ դիրքում,  
Վոր իր՝ կոլխոզի

Կուրակ թշնամին  
Մի վրաս չտա  
Կոլխոզի կալին:

Իսկ լեզուները  
Այ ու բոցեղեն  
Արայի տունը  
Լափում են արդեն,  
Յեվ բոցն ու ծուխը  
Խառնված միատեղ,  
Ընդհանուր ուժով  
Գործում են այնտեղ:

V

— Ծնւտ արա, հասիր,  
Արն, տնավեր,  
Տունդ այրվում ե,  
Ինչո՞ւ յես կանգնել:  
— Ի՞նչ ես դուքս տալիս,  
Կարո՞, մտածիր.  
Պահակ եմ, գիտե՞ս,  
Գնա՞, հեռացիր:

— Ահա յեկել եմ,  
Վոր փոխեմ յես քեզ,  
Ինձ շտապ կարգով  
Կոլխոզն ուղարկեց:

Իջնում ե Արան,  
Իջնում ե դիրքից,  
Անցնում անձրևի,  
Ջրերի միջից ...

Ահա և տունը...  
Մի խարույկ հսկա,  
Յեվ նրա շուրջը  
Ով ասես՝ չկա.  
Տղամարդ, կանայք,  
Ծերեր, մանուկներ...  
Ամբողջ կոլխոզը  
Վտաքի յե կանգնել:

Իսկ լեզուները  
Այ ու բոցեղեն  
Արայի տունը  
Լափել են արդեն,  
Յեվ բոցն ու ծուխը  
Խառնված միատեղ,  
Ընդհանուր ուժով  
Գործել են այնտեղ...  
VI

Արայի հարցն է  
Իրված ժողովում:  
Բոլորը խոսում,  
Նրան են գովում,  
Յեվ վողջ կոլխոզը,  
Ժողովի վերջում,  
Միաձայն հանեց  
Հատուկ վորոշում.

«Մշտապես հանել  
Կարմիր տախտակին  
Անձնվեր, կայուն,

Հերոս պահակին,  
Տալ իբրև նվեր  
Քառասուն աշխոր,  
Յեվ նրա համար  
Տուն շինել մի նոր»:

1934

## ՄԵՂՈՒՆԵՐԻ ԿՈՍՈՒՆԱՆ

### I

Կյանքն ե յեռում  
Փեթակում,  
Աշխատում են  
Ու յերգում  
Հազար-հազար  
Բանվորներ—  
Աշխատավոր  
Մեղուններ—  
Մի կոմունա  
Ահագին,  
Ամեն բան լավ  
Ու կարգին:  
Վոմանք փեթակն են  
Մաքրում  
Ադան ու կեղտը  
Դուրս տանում,  
Վոմանք հպարտ  
Ու կամաց  
Պատրաստում են  
Մեղրահաց,  
Վոմանք բնքուշ,  
Խմբովին

Խնամում են  
Մայր մեղվին,  
Վումանք մտնում  
Փոսիկները,  
Մաքրում փոշոս  
Տոսիկները,  
Վումանք ծանր  
Յեվ ուշիկ  
Մեղր են շինում  
անուշիկ...  
Կյանքն է յեռում  
Փեթակում.  
Աշխատում են  
Ու յերգում  
Հազար-հազար  
Բանվորներ—  
Աշխատավոր  
Մեղուներ—  
Մի կոմունա  
Ահազին,  
Ամեն բան լավ  
Ու կարգին:

## II

Ահա մի խումբ  
Բանվորներ—  
Աշխատավոր  
Մեղուներ—  
Թռան, յելան  
Փեթակից,  
Անցան փայլուն  
Գետակից,

Տեսան դաշտում  
Կակաչներ—  
Իրենց հոտոս  
Ճանաչներ:  
—Այ սիրունիկ  
Կակաչներ,  
Մեր սիրելի  
Ճանաչներ,  
Մենք պաշար ենք  
Հավաքում,  
Մեղր շինում  
Փեթակում,  
Վոր յերբ փշի  
Չար քամին,  
Ծաղիկները  
Թառամին,  
Հողմն ու բուքբ  
Հառաչեն,  
Գետն ու առուն  
Ել սառչեն,  
Լինենք հանգիստ,  
Ապահով,  
Ու չտեսնենք  
Քաղց ու սով:  
Թողեք դեղին  
Ձեր փոշին  
Յեվ նեկտարը  
Անուշիկ  
Առնենք, տանենք  
Փեթակը,  
Մեղր շինենք  
Մենք քաղցրիկ:

—Բարով տեսանք,  
Ընկերներ,  
Մեր սիրելի  
Մեղուներ:  
Մենք լսել ենք  
Ձեր մասին.  
Աշխատում եք  
Միասին  
Ու շեք ասում  
«Քո և իմ»:  
Մեր փոշին ու  
Նեկտարը—  
Ձեր ձմեռվա  
Պաշարը—  
Սուք, տարեք  
Փեթակը,  
Վոր կուշտ անցնի  
Ձեր կյանքը:

### III

Մեղուները  
Տղտղան  
Գրոն տվին  
Ու մտան  
Կահաչների  
Սրանքը,  
Ծաղիկների  
Բաժակը,  
Փոշին առան  
Վտտիկով,  
Բազը հյուսթը  
Կնճիթով,

Թևին տվին  
Ու թռան  
Դեպի իրենց  
Կոմունան,  
Ուր աշխատում  
Են, յերգում  
Հազար-հազար  
Բանվորներ—  
Աշխատավոր  
Մեղուներ:

1929

ՄԵՐ ԳԵՏԸ

I

Յաղու սարի  
    Կատարին  
Ձյուն ե նսած  
    Վողջ տարին:  
Ձյունը հալվում ե  
    Կամաց,  
Կաթիլ-կաթիլ  
    Իջնում ցած,  
Թաքուն խոտում,  
    Փսփսում,  
Քարի զիպչում  
    Քչքչում:  
Յեվ ձորերի  
    Փեշերով,  
Հազար առվակ  
    Յերգելով  
Շտապում են  
    Դեպի վար,  
Դառնում գետակ  
    Մի վարար,  
Այնքան համեղ  
    Ու մաքուր,  
Վոր կոչվում ե  
    Մեղրաշուր:

II

Վոլոր-մուր,  
    Ոճի պես,  
Մեղրաշուրը  
    Փրփրագեղ  
Դուրս ե գալիս  
    Հայն հովիտ,  
Փռում շուրն  
    Իր վճիտ,  
Ձուր ե տալիս  
    Կոլխոզի  
Այգուն, արախ  
    Ու ցանքսին  
Ապա անցնում  
    Նավով ցած,  
Պտտացնում  
    Ջրազաց:  
Վրաններից  
    Ճամբարի  
Պրոններները  
    Սրի  
Գետին մոտիկ,  
    Ծառի տակ  
Կարթը ձեռքին  
    Նստոտած,  
Ձուկ են վորսում  
    Գետակից:  
Մի ուրիշ խումբ  
    Լող տալիս,  
Ապա յերնում ե,  
    Վազում  
Ափի մանրիկ  
    Ավազում,

III

Հետո անցնում ե  
 Հովտից  
 Մեղրաջուրը  
 Փրփրալից,  
 Իջնում ձորը  
 Խոր ու նեղ,  
 Իջնում թափով  
 Յեվ այնտեղ  
 Ուժ ե տալիս  
 Ահազին  
 Ձորի հիզրո  
 Կայանին:  
 Հիզրո կայանը  
 Հսկա  
 Լույս ե տալիս  
 Մոտակա  
 Քաղաքներին,  
 Գյուղերին,  
 Պտույտ տալիս  
 Անդազար  
 Մեքենաներ  
 Անհամար:  
 Ապա յեկնում ե  
 Հպարտ,  
 Փռվում, հոսում  
 Լուռ, հանդարտ:  
 Այստեղ՝ դաշտում  
 Նրա հետ  
 Խառնվում են  
 Յերեք գետ  
 Ու միասին՝  
 Լայն, արձակ,

Անձայր դաշտով  
 Ընդարձակ  
 Ընթանում են,  
 Քլքլում,  
 Արևի տակ  
 Պլպլում:

IV

Ել գետակ չի  
 Սրընթաց  
 Չարաձձի,  
 Փրփրած,  
 Այլ հսկա գետ  
 Խոր, անտակ:  
 Ջուրը պղտոր,  
 Ընդարձակ,  
 Վրան կամուրջ  
 Ահազին՝  
 Ամուր ճամփա  
 Գնացքին,  
 Մեծ ու պտիկ  
 Նավակներ  
 Սլանում են  
 Վար ու վեր:

V

Դաշտի ծայրին՝  
 Ծովի մոտ  
 Նա դառնում ե  
 Մտածկոտ,  
 Վոր հեռացավ  
 Նա հավետ

Իբ ասիերից  
    Բուրավետ:  
Մին ել ծովս  
    Անասնման  
Բաց ե անում  
    Իբ բերան  
Յեվ ընդունում  
    Իրա մեջ  
Մեղրաջրին  
    Խոր ու մեծ:

1930

ՈՒՐԱԽ ՀՐԱՅՐԸ  
ՅԵՎ ՍԱԳԻ ՍԱՅԼԸ

I

Մեր Հրայրը  
Քաջ ու սրտոտ  
Պետք ե գնար  
Տատիկի մոտ.  
Մի գիրք էյին  
Տվել ընծա,  
Ուզում եր, վոր  
Տատին ցույց տա:  
Ազատ որվա  
Նախորյակին  
Գիրքը դրավ  
Գլխատակին,  
Մաքուր սրբեց  
Շորն ու գոտին,  
Դրեց իրա  
Թախտի մոտին,  
Հույսն ու մութը  
Չբաժանված,  
Իբ մայրիկին  
Կանչեց, ասաց.  
— Դե, մայրիկ շան,  
Քնում եմ յես,  
Ծեզ ու ձեզին

Իմաց կանես:  
Պիտի շուտով  
Գնամ ու գամ՝  
Հավաքույթ կս  
Յերեկոյան:  
Ամառիս տաք,  
Այրող որ է,  
Գնալ-գալը  
Քիչ դժվար է:

II

Առավոտյան՝  
«Կի-կլի-կլի-կլի...  
Հրայր, վեր կաց  
Շորդ հագի»...  
Աքլորը պինդ  
Չախով կանչեց,  
Մեր Հրայրին  
Տեղից հանեց:  
— Իե, մայրիկ ջան,  
Գնում եմ յես:  
— Հրայր, բալես,  
Չգուշ լինես,  
Ավտոների  
Տակ չընկնես:  
Տատիկին ել  
Իմ բերանից  
Հազար-հազար  
Բարև կանես:  
— Ի՞նչ էս ստում,  
Մայրիկ դու յել:  
Ավտոյի տակ  
Ի՞նչ գործ ունեմ:

Տատի տանը  
Շատ մառիկ է,  
Անասուի մտ,  
Բլբլ տակ է:  
Եսպես ուրախ  
Գնամ ու գամ,  
Վեք բոլորն ել  
Չարմանան:

III

VI

Եսպես շուտով  
Ծեղ ու ծեղին, ՎՄ  
Ընծա չէրբըր բնա՞մ  
Կուն յաակին, զո՞ւ  
Մեր Հրայրն սարսմա՞ւ  
Արազ քայլով յի՞՞  
Մնց եր կենում, ՎՄ  
Լայն դաշտերով: զոյ՞մ  
Առավոտ եր ծի վրց՞մ  
Վառ ու յիրուն, չո՞ւմ  
Հոջն եր խաղում յո՞ւ  
Լայն դաշտերում, յո՞ւ  
Գետն եր հասցմ յա՞ւ  
Որոր ստույթ մայրց՞ի  
Յեղ ապանոց յոյ՞մ  
Կամաց խաղում: զոյ՞՞  
Իեղին արտեր, զոյ՞՞  
Կանաչ խոտեր, յո՞ւ —  
Կոլկոզնիկի զոյ՞՞, յո՞ւ  
Ուրախ յերթեր: սո՞ւ՞՞  
Յերեք ինչոց մամնա՞մ  
Մերեկաներ տոնց յո՞ւ  
Սոցմըցում են յի բամ  
Հայտարարելն սո՞ւ՞՞

Ուրախ-ուրախ,  
Ժպիտ դեմքին,  
Էնծա գիրքը  
Կռան տակին,  
Քայլում եր նա  
Ազատ դաշտում  
Յեվ ամեն ինչ  
Նայում, դիտում:

IV

Մի թփի մոտ  
Կանգ առավ նա,  
Վոր հաց ուտի,  
Հանգստանա:  
Թփի տակին  
Մի լավ շնիկ,  
Կլոր, ինչպես  
Բրդի կծիկ,  
Կուչ եր յեկել  
Ու փոքստում,  
Յեվ կարծես թե  
Հաց եր ուզում:  
Գրպանիցը  
Մի կտոր հաց  
Տվեց շանը,  
Շոյեց, ասաց.  
— Սոված ես, հա:  
Դե, վեր առ, կեր,  
Հետս արի  
Դառնանք ընկեր:  
Դե, շուտ արա,  
Նազ մի անի,  
Տասս պիտի

Փլավ անի:  
Թե վոր նրա  
Տանը համես,  
Ճախ բուլը  
Կտամ յես քեզ:  
Բա անունդ,  
Միրուն շնիկ,  
Յես ինչ գնեմ:  
Հա, Դիլլիլիկ:  
Դիլլիլիկ շան,  
Արի, արի,  
Ճամփեն մոտ ե,  
Մի ալարի:

V

Կամրջի մոտ,  
Ճամփի տակին,  
Նա հանդիպեց  
Մի բրդադի:  
Յերեք պիտներ  
Վզկասներով  
Անցնում էին  
Են դաշտերով:  
— Բարե՛, բարե՛,  
Պիտներներ,  
Եզ ինչ շուտ եք  
Դաշտ դուրս յեկել:  
— Դուրս ենք յեկել  
Մեզ ու ձեզին,  
Նայենք, հսկենք  
Ցորնի բերքին:  
Չար թշնամի՛  
Կուլակ, տերտեր,

Մեր գյուղերում  
Պահաս չեն դեռ:  
— Յես էլ ձեզ պես  
Վոր մեծանամ,  
Բերքի պաշտպան  
Պիտի դառնամ:  
— Բա դու ուր ես  
Գնում եղաքս:  
— Դարձել եմ յես  
Գերագանցիկ,  
Տվել են ինձ  
Սիրուն մի գիրք,  
Եզ լավ, սիրուն  
Գիրքը հիմի  
Տանում եմ, վոր  
Տասս տեսնի:  
Տատիս գյուղն էլ,  
Հրեն... Մտիկ...  
— Կեցցեն դու քաջ  
Հոկանմբերիկ:  
Վոր գնում ես,  
Ճամփեն գիտես:  
— Մի անգամ եմ  
Յես գնացել,  
Ճանապարհը  
Չեմ մոռացել:  
— Ի՞նչ լավիկն է  
Բո եզ շունը,  
Դա յե՛լ է գնում  
Տատիդ տունը:  
— Շան անունը  
Դիլգիլիկ է,  
Շատ իմաստուն

Ու խելոք ե...  
Դե, յես գնամ,  
Շուն յես դառնամ:  
Հավաքույթ կա,  
Յերեկոյան:  
VI  
Դիլգիլիկն  
Ու Հրայրը  
Շուտով հասան  
Գյուղի ծայրը:  
Անցան կանաչ  
Բլրի տակով,  
Արագահոս  
Գետի կողքով  
Ցածրիկ պատից  
Թռան տակ,  
Մտան տառի  
Կանաչ քակր:  
Սազիկներն  
Որոր-ըրոր,  
Պատել էյին  
Տատի բուրբ,  
Տատիկն էլ մի  
Մեծ ամանից  
Սազիկներին  
Կեր եր տալիս:  
Հենց վոր հանկարծ  
Տղին տեսավ,  
Թևերը բաց  
Վրա հասավ,  
Գրկեց, պաչեց

Ջուխտակ թուշը,  
Գոչեց.— Բալաս,  
Իմ անուշա,  
Եդ վնց յեղամ  
Յեկար ինձ մոտ,  
Ազիզ բալես  
Քաջ ու սրտոտ:  
— Իարձել եմ յես  
Գերազանցիկ,  
Ընծայել են  
Մի սիրուն գիրք:  
Գիրքն ել ես ե,  
Տատի ջան, տես,  
Բերել եմ՝ քո  
Աչքով տեսնես:  
— Քեզ ել մասազ,  
Քո գրքին ել,  
Եդ ինչ խելոք  
Բան ես արել:  
Դե, գնանք տուն,  
Ազիզ բալես,  
Նստիր շունչ առ,  
Հոգնած կլինես:  
Դե, գիրքդ տուր,  
Տեսնեմ, ջանիկ:  
Այս ինչ ազա յե  
Սիրունիկ:  
— Պավիլին ե դա  
Մորոզովը,  
Սիրերի քաջ  
Պիտները,  
Վորին վազուց

Սպանել են  
Իրենց գյուղի  
Կուլակները:  
— Փշանան եդ  
Կուլակները,  
Կրակ ավին  
Մեր դեզերը:  
— Եդ Պավիլիկը,  
Վոր ասացի,  
Շատ սրտոտ եր  
Ու խելացի,  
Թշնամին եր  
Նա կուլակի,  
Պահապանը  
Կոլխոզ— բերքի:  
Դրա համար  
Ամեն պիտներ  
Ուզում ե քաջ  
Պավիլիկ լինել:  
— Յես ել ընծա  
Պետք ե տամ քեզ:  
Ի՞նչ ես ուզում,  
Ասա, բալես:  
— Ես սագերից  
Մինը տուր ինձ:  
— Վորը կուզես,  
Ազիզ բալես:  
Ասա, տեսնեմ  
Վնց կտանես:  
— Յես կտանեմ,  
Իմ լավ տասի,  
Դրա մասին  
Մի մտածի:

— Խոհանոցի մեջ  
 Մի կարգի կար  
 Անուր շքեղությամբ  
 Լայն ու մաշկափ  
 Սաղը գնեմ քեզ  
 Երա միջին, քան  
 Վոր տանկյուն  
 Եւ չիմանի, բժ —  
 Իսկ քո շան հետ  
 Մենք ծառայի չենք.  
 Բա անուր լիցի  
 Ինչպէս կանչենք:  
 — Եան անուրից  
 Դիզիլիկ Եւ,  
 Եան իմանալով  
 Ու խելոք եւ  
 Դիզիլիկ ջան, մենք  
 Արի, արի, մ ետք  
 Տառի համար լիս  
 Մի լափ պարի:  
 — Դիզիլիկը  
 Վորն է, բայն, չոր  
 Մի լափ անուր  
 Չկան, դենտ մժ —  
 Ա, անպրեա դուր  
 Հրայր, բայն, —  
 Միշտ ել երգեցիք  
 Խելոք լինեն, լաւ  
 Մենակ եմ պես  
 Տարին բոլոր, սմժ —  
 Մնա ինձ մտայ եւ  
 Մի քանի որ  
 — Վնայ կլինի, ՎՍ



Վոր յես մնամ, թողմի  
 Հրես շուտով միտոմ  
 Պիտի զհասարակ իտաՄ  
 Հավարտ լի կարգմ  
 Յերեկոյսն: Ի վրա՞  
 — Խոնքով ընկանք,  
 Հրայր, բարես, զմեզ  
 Ախր հրեք սկզբն  
 Սոված կլինես: ԿրաՄ  
 Գնամ մի բան ընկած  
 Յեփեմ, ուտես: ճճՄ  
 Սիրող ինչ է ինչ ճճՄ  
 Ուզում բալես: ԿրաՄ  
 — Փլամ, տամի,  
 Ճուտն ել տակին: ճճՄ

Վասն ճարտարի  
 Կարձ VII, Կար ԳՄ

Մեր Հրայրը, ԳոմԶ  
 Ձեռքին կողովը չէ՞ս  
 Անց եր կենտե՞րեց  
 Կամաց, պարզաբան  
 Սաղը չաղիկը-բաղձ  
 Կողովը մե՞ծ լի լիցի  
 Հրայրը շոտով պո՞մ  
 Հոգնեց, քրոնեց: ԿճՄ  
 Հողի՞՞ հասած լի բախ  
 Գյուղի՞՞ ծայրին, մի՞Մ  
 Ուժը՞ հաստով, մ մի՞Մ  
 Նստեց կարինս ճճՄ  
 «Ես քան բեռնի յ՞՞  
 Յես վոնց կտանես, լի՞Մ  
 Պետք էամի հեշտի՞՞՞՞՞՞  
 Միջոց ճարեն» ճարձ



Վերցրեց ու  
կողովի տակ  
Մատով բացեց  
Յերկու մեծ ծակ,  
Չաղլիկ սագին  
կամաց քաշեց,  
Տոտիկները  
Անցքից հանեց,  
Մազը յելավ,  
Քեանին կանգնեց:  
Մեծ կողովը  
Մեջքին առած,  
Մազը քայլեց  
կամաց-կամաց:  
Մեջքի գոտին  
Դարձրած սանձ,  
Մի դալար ճյուղ  
Չեռքն առած,  
Գոչեց. — Նո՛, նո՛,  
Հրեղեն սագ,  
Վազիր, զնա  
Արագ-արագ:  
Իկլեկլեկն էլ  
Նրա յեռքից  
Արագ-արագ  
Վագ եր տալիս,  
Մին վազոււմ եր,  
Մին էլ նստում,  
Դունչը ցցում  
Ու վրգստում:  
Ախր պատիկ  
Շնիկ եր նա,  
Եղբան ճամփա

Ինչպէս գնար:  
Մի յերեխա  
Գյուղի ծայրին  
Տեսավ սագին  
Ու Հրայրին,  
Գոչեց. — Տղերք,  
Սագի սայլը...  
Շուտով յելեք  
Գյուղի ծայրը:  
Հեռու, մոտիկ  
Փողոցներից  
Մի նայեցեք  
Վո՛նց են գալիս,  
Գալիս են ու  
Նայում սայլին,  
Հնարագետ  
Մեր Հրայրին:  
Իսկ Հրայրն  
Ուռած, վրված,  
Գոտի սանձը  
Չեռքին բռնած,  
Մարտիում է,  
Քշում իր ձին,  
Ել չի նայում  
Դար ու փոսին:  
— Ե՛յ, տղաներ,  
Հեռո՛ւ, հեռո՛ւ,  
Շատ ճանապարհ եմ  
Գնալու:  
Իմ ձին, գիտե՛ք,  
Հրեղեն է,  
Սայլն էլ, տեսե՛ք,

Իր վրենն եւ  
Մի խանդարեք,  
Թողեք գնամ  
Հավաքույթ կա  
Յերեկոյան:  
Դիւղիւիկ ջան,  
Արի, արի,  
Ճամփեն մտտ ե,  
Մի ալարի:

VIII

Եսպես անցան  
Դաշտի միջով,  
Անցան գետի  
Նեղ կամրջով,  
Մին ել ճամփին  
Դիւղիւիկ  
Հանկարծ ցցեց  
Իր գնչիկը,  
Գետնին նստեց  
Ու իրգստաց,  
Թե՛ «Հրայր ջան,  
Մի քիչ կամաց,  
Ախր պատիկ  
Եսիկ եմ յես,  
Վոտս ցալեց,  
Հերիք վաղես»:  
— Հոգնել ես, հմ,  
Իմ լավ ընկեր,  
Շատ ճանապարհ ես  
Դու յեկել:  
Արի գնեմ

Սայլի միջին,  
Հանգստանաւ  
Ելի իջիլ:  
Հանկարծ դաշտից  
Մի պիտներ  
Բարձր գոչեց.  
— Եհէյ, ընկեր,  
Ո՛ւր ես գնում,  
Հլա մի կաց:  
Յեկել ես, վոր  
Շունն դողանաս:  
— Լավ ճանաչիր  
Դու ինձ, ընկեր,  
Յերբեք մի բան  
Չեմ գողացել:  
Սոված, ծարավ  
Թփի տակին  
Վնդստում եր  
Նա դառնագին:  
Հետս տարա  
Տատիկի մտտ,  
Տվի մի չաղ  
Ճուտիկի վոտ...  
— Իե լավ, դե լավ,  
Հանաք արի,  
Ես անգամին  
Դու ինձ ների:  
Եդ պուճուրիկ  
Սիրուն շունն եր  
Մեր կովտոյից  
Կինի նվեր:

միջին  
գնամ

Յերբ իջել եր  
 Մթնշաղը  
 Նրանք հասան  
 Իրենց գյուղը:  
 Տեսնելով են  
 Սագի սայլը,  
 Մի յերեխա՝  
 Գիծ Չարմայրը,  
 Գոչեց. — Հրեն  
 Մեր Հրայրը,  
 Առաջն արած  
 Սագի սայլը:  
 Վազեք շուտով,  
 Յեկեք տեսեք,  
 Յեկեք տեսեք  
 Ու զարմացեք...  
 Հեռու, մտախի  
 Փողոցներից  
 Մի նայեցեք  
 Վճնց են գալիս,  
 Գալիս են ու  
 Նայում սայլին,  
 Հնարագետ  
 Մեր Հրայրին:  
 Իսկ Հրայրը  
 Ուռած, փքված  
 Գոտի — սանձը  
 Ձեռքին բռնած,  
 Մտրակում է  
 Իր սագիկին,  
 Վոր շուտ հասնի

Իր մայրիկին:  
 — Ի՞նչ ես արել,  
 Հրայր, բալես,  
 Ել մի ուրիշ  
 Ոյին չունես:  
 Ասաց, վազեց  
 Տղին գրկեց  
 Ու թշերը  
 Պինդ համբուրեց:  
 — Նայիր, մայրիկ,  
 Ես սագիկը  
 Նվիրել ե  
 Ինձ տատիկը,  
 Ես սիրունիկ  
 Պատիկ շունն ել  
 Կոլխոզից են  
 Նվեր տվել:  
 Շան անունն ել  
 Դիլդիլիկ ե,  
 Շատ իմաստուն  
 Ու խելոք ե:  
 — Այ ապրես դու,  
 Հրայր, բալես,  
 Միշտ ել եզպես  
 Խելոք լինես:  
 — Բա չասացի՞  
 Յես գնալիս  
 Ու քեզանից  
 Հեռանալիս.  
 Ենպես ուրախ  
 Գնամ ու գամ,  
 Վոր բոլորն ել

Զարմանան:  
Դե, Դիզիկի,  
Իմ լավ շնիկ,  
Չփոքաստ,  
Խելոք մնաս:  
Մայրիկի մտ  
Հանգիտա կատի:  
Յես գնում եմ  
Հավարույթի:

X

Սրբեց շորը,  
Կապեց գոտին,  
Գնաց դարոց  
Հավարույթի:

1935

մեծ բերանով  
դմիա դմիմ  
յն մեծուն մամ  
եմ իկիկրիկ  
մտասանով տամ  
եմ գոյժով մ  
լար սմիյտա լՍ—  
ամիայ պլազ  
սմարմ յն ուցիՄ  
ամիկի ցոյժով  
մըասուչ աՂ—  
սիյամբ սմՑ  
բիմարժց մ  
սիյամտով  
սիայո սմրամ  
կար յո կամբ  
յն սիյոյոց դոլի

ԶԱՐԴԱՐԵՆՔ

Հոկտեմբեր ե, վեր կացեք  
Մեր դանլիճը զարդարենք:  
Ես՝ Լենինի նկարը,  
Վոր բերել ե Նեկտարը,  
Ես՝ Ստալինի նկարը,  
Վոր բերել ե Աբգարը,  
Ես ել կարմիր դրոշակը,  
Վոր շինել ե Մխակը,  
Ես ել մի լավ պլակատ,  
Վեր առ, պահիր, Արևնատ:


Դե վեր, Շողեր,  
Մեխերը բեր

1938

## ՀՈԿՏԵՍԲԵՐ

Մեծ փողոցում  
Իրարանցում  
Յերգ ու նվագ բարձր ու զեւ  
Մարդկանց շարքեր,  
Զվարթ դեմքեր,  
Դրոշակներ ալ-կարմիր:  
Տոնում ենք մենք  
Այսօր ուրախ  
Հոկտեմբերի տոնը մեծ,  
Վոր մեր խավար,  
Սարուկ յերկրին  
Ազատութիւն, լույս բերեց:


1928



## ԼԵՆԻՆ ՊԱՊԻՆ

Լենին պապին՝ ել  
Մանուկ ե յեղել  
Մեզ նման պատիկ,  
Փիր ու սիրունիկ,  
Բռնել ե թիթեռ,  
Սիրել ծաղիկներ,  
Մանակով սղլալ,  
Յերգել ու խաղալ:  
Բայց խաղ ու պարից,  
Մանակ թիթեռից,  
Յերգից առավել  
Ուսումնս ե սիրել:

1930



## ԻԼԻՉԻ ԱԶԻԿՆԵՐԸ

Ելեկորական  
Լույսերը վառ,  
Վոր փայլում են  
Այնպես պայծառ,  
Աչիկներն են  
Մեր Իլիչի,  
Նրանք յերբեք  
Ել չեն հանգչի:

Նայում ե նա՝  
Մեր Իլիչը,  
Մեր թանկագին  
Ուսուցիչը,  
Նայում ե նա,  
Փպտում անուշ,  
Վոր իր խոսքը  
Դարձել ե ուժ:

1935

ԼԵՆԻՆԻ ՄԱՍԻՆ

ԼՈՊԱՐԱԿԱՆ ՅԵՐԳ

(Փոխադրություն)

Ծովի ջրերում  
Սառույց է լողում,  
Ծովի ջրերում  
Կղզի յե լողում:  
Այդ կղզու վրա,  
Ծովի ջրերում,  
Մի մեծ առաջնորդ  
Մարտիկ է ապրում:  
Նա դուրս է արել  
Գյուղ ու ավանից  
Վաճառականին,  
Հրաման տվել  
Սամոյեզներին  
Ու լոպարներին,  
Վոր կառավարեն  
Իրենց յերկիրը  
Սիրով, միասին:

\*\*\*

Զարկվում են կղզուն  
Անթիվ ալիքներ,  
Իսկ քամին նրան

Պահակ է կանգնել:  
Այդ կղզու վրա  
Լենինն է կանգնած,  
Յեղջերվի մորթուց  
Սիրուն շոր հագած:  
Ո՛յ, կղզի դու մեծ,  
Դու սար անազին,  
Յերևա դու մեր  
Լոպարի աչքին:  
Ո՛յ, Լենին Իլիչ,  
Առաջնորդ մարտիկ,  
Մի մտիկ արա  
Լոպարի կյանքին:  
Մեր յերկրում հիմա  
Յեղջերու կա շատ,  
Ապրում ենք ուրախ,  
Սիրով ու ազատ:  
Ո՛յ, Լենին Իլիչ,  
Դու կառ մեր սրտում,  
Հայտնում ենք մենք քեզ  
Շնորհակալություն:

\*\*\*

Զարկվում են կղզուն  
Անթիվ ալիքներ,  
Իսկ քամին նրան  
Պահակ է կանգնել:  
Ո՛յ, Լենին Իլիչ,  
Մարտիկ առաջնորդ,  
Այդ սառցե սարից  
Հյուր արի մեզ մոտ:

1934

**ՔԱՆԱԿԸ ԿԱՐՄԻՐ**

**Քանակը կարմիր,  
Արթուն և զգաստ  
Կանգնած է պատրաստ:**

**Թող վողջ աշխարհի  
Բուրժույ ու ցարեր  
Հորինեն մեր դեմ  
Կռիվ ու դավեր:**

**Քանակը կարմիր  
Արթուն և զգաստ  
Կանգնած է պատրաստ:**

**Թող դուրս գա մեր դեմ  
Հազար թշնամի,  
Հազար թնդանոթ  
Մեր առաջ լեխի:**

**Քանակը կարմիր  
Արթուն և զգաստ  
Կանգնած է պատրաստ:**

**Մենք պատերազմել  
Ցերբեր չենք ուզել,  
Բայց յեթե յեղնեն  
Խորհուրդների դեմ:**

**Քանակը կարմիր,  
Արթուն և զգաստ  
Կանգնած է պատրաստ:**

**Կեցցե, կեցցե մեր  
Քաջ ու անվեհեր  
Քանակը կարմիր՝  
Վոր արթուն, զգաստ  
Կանգնած է պատրաստ:**

ԱՅՆ ՈՎ Ե

— Այն ով է, վոր  
Տարին բոլոր,  
Թե հյուսիսի  
Մասսիկ ցրտում,  
Թե հարավի  
Տաք ու տոթում,  
Արևելքում,  
Արևմուտքում,  
Գիշեր, ցերեկ  
Արթուն, անքուն  
Մեր սահմանն է  
Նայում, հսկում:

Հսկում է նա  
Արթուն, անքուն  
Գիշեր, ցերեկ  
Ցրտում, տաքում,  
Վոր բանվորը  
Յեվ գյուղացին  
Հանգիստ, խաղաղ  
Կենան գործի,  
Վոտ չղնի  
Չար թշնամին  
Մեր յերկիրը

Խորհրդային  
Յեվ իր կեղտոտ  
Դունչը խոզի  
Մեր բոստանը  
Նա չխոթի:

— Գիտեմ, գիտեմ,  
Իսկույն ասեմ.  
Կոչվում է նա  
Խորհրդային  
Անհաղթ կարմիր  
Բանակային:

1934

ՏԱՏԻԿՆ ՈՒ ՔՈՌՆԻԿԸ

— Քաղցրիկ տատի,

Մի ինձ պատմի.

Դու յեղ ինձ պես

Վոր ժպտերես

Աղջիկ եյիր,

Գնահամ եյիր

Դպրոց, յերգի

Ու մարզանքի:

— Իհ, բալա ջան,

Ինչ յերգ, ինչ բան.

Աղջիկներին

Ուսում չկար,

Վոչ ել մարզանք,

Գիր ու նկար:

Բացի մեր տան,

Հանդի գործից,

Ել չունեյինք

Ուրիշ վոչինչ:

Մի մատ աղջիկ

Տվին մարդու,

Չհարցրին ել՝

«Ուզում ես դու»:

Միշտ ել անդետ,

Անուս, թերի,

Տգամարդու

Ձեռքին գերի,

Կյանք ենք մաշել

Գոմում, դրսում,

Թոնրատակին,

Խոհանոցում:

Կյանք ենք մաշել,

Ծածուկ լացել,

Լավ որերի

Յենք սպասել...

Լենին պապին

Յեկավ, բալես,

Մութ աշխարհից

Մեզ դուրս բերեց:

Նրա յեկած

Ճամփեն, տեսնեմ,

Շուշան, մեխակ,

Վարդեր բսնեն...

1934

Մ Ա Յ Ի Ս

Այ ու ալվան վառ մայիս,  
Դու ամենից լավ ամիս,  
Կյանք ու արև ես տալիս,  
Ի՞նչ սիրուն ես, ջան մայիս:

Հանդ ու այգի զարդարուն,  
Հողմ ե խաղում զաշտերում,  
Թռչուններն են քեզ գովում,  
Ի՞նչ նախշուն ես, լավ մայիս:

Դու կայտառ ես մանկան պես,  
Թովումն ու խնդերես,  
Յերբ կլինի վոր բերես  
Վողջ աշխարհին ալ-մայիս:

1929

ՔՍԱՆՎԵՑԻ ՅԵՐԳԸ

«Մենք կմեռնենք,  
Բայց կոմունան  
Վողջ կմնա  
Հավիտյան»...  
Այս ասացին  
Քսանվեցը  
Դահլճներին  
Այն վարձկան:

Այժմ հազար,  
Հազար անիվ  
Գործարանում  
Դղրդում,  
Հազար-հազար  
Տրակտորներ  
Մեր դաշտերում  
Հունդում,  
Քսանվեցի  
Յերգն են յերգում՝  
Վերջին խոսքը  
Անդադար.  
«Նրանք մեռան,  
Բայց կոմունան  
Վողջ կմնա  
Հավիտյան»...

1931





— Մտտ արի, այ չորան, — բարկացած ասում է խա-  
նը: — Մաղն ի՞նչ արավ, վոր կաղն ինչ անի: Ասան, տես-  
նեմ ի՞նչ ես ասում:

— Խանն ապրած կենա, սկսում է հովիվը, — յես մեն ու  
մինակ հազար յերամակի պահապան եմ: Ամեն մի յերամա-  
կում չորս հազար ձի կա: Նրանց հաշիվն իմանալու համար,  
ցերեկով ձիերի ականջներն եմ համարում, գիշերը՝ վոտները:

Մի առավոտ ել վեր կացա, ձիերի ականջները հա-  
մարեցի, տեսա՝ մատակը չկա, գիշերն ել վոտները համարեցի,  
տեսա՝ ելի նույն մատակը չկա:

Չկա ու չկա:

Մտրակս ցցեցի գետնին, բարձրացա ու կանգնեցի  
ծայրին:

Թեև մտրակս այնքան ել յերկար չեր, բայց Բաղդադ  
քաղաքը յերևում եր, իսկ մատակը չեր յերևում:

Նայեցի, տեսա, վոր Արազի նն ափին մատակս արա-  
ծում է: Մի սև քուռակ ել, պոչը ցից արած, դունչը բարձ-  
րացրած, դես ու դեն է վազվզում:

Գլխի ընկա, վոր մատակը քուռակ է ծնել:

Վազելով հասա Արազին:

Մատակը վոր ինձ տեսավ, խրխնջաց, բաշը թափ  
տվեց, յեկավ Արազի ափին կանգնեց:

Բայց Արազի վրա կամուրջ չկար, վո՞նց անցնեյի:

Մտրակս ել, հո գիտես, այնքան ել յերկար չեր:  
Յերկար չեր, բայց Արազի լենքովը մեկ կլիներ:

Մտրակիս մի ծայրը դրի Արազի ես ափին, մինն ել  
ենն ափին, բարձրացա մտրակի վրա ու գետն անցա:

Գետն անցա, քուռակը հեծա ու յետ դարձա: Մա-  
տակն ել մեր յետևից յեկավ:

Մեկ ել հանկարծ գետից մի նապաստակ դուրս յեկավ  
ու սկսեց գետափի խոտերի միջից ձկներ բռնել ու նա-  
խաճաշ անել:

Քուռակին մտրակեցի, վոր նապաստակին հասնեմ:

Յերեք որ ու գիշեր քուռակը վազում եր նապաստակի  
յետևից: Յերրորդ որը միջնադին հասանք նապաստակին:

Մտրակիս կոթը նշան բռնեցի ու կրակեցի: Նապաստա-  
կըն ընկավ:

Քուռակից իջա, մորթին քերթեցի և սկսեցի ճարպ  
հալել: Ամանիս մեջ միայն չորս փութ տեղավորվեց, մնա-  
ցածը թափեցի:

Չիերին նապաստակի տապակած մսով կերակրեցի,  
ինքս ել գարի կերա և սկսեցի տրեխներս ճարպով մաք-  
րել:

Մաքրեցի, մաքրեցի, մի տրեխս պլպլացրի, մյուսի  
համար ճարպ չմնաց՝ մնաց կեղտոտ:

Պառկեցի ու քնեցի:

Գիշերվա մի ժամանակ զարթնեմ, տեսնեմ ի՞նչ կռիվ,  
ի՞նչ աղմուկ...

— Կորիք այստեղից, մաքուր հիմար, — գոչում եր  
կեղտոտ տրեխս:

— Հեռացի՛ր աչքիցս, կեղտոտ շուն, — գոռում եր մա-  
քուր տրեխս:

Գնում եյին, գալիս, ու իրար տալիս:

«Ես լավ չի, — մտածեցի յես: — Յեթե մի՞նչև առավոտ  
եսպես գնան ու գան, իրար տան, յերկուսն ել կբրբրվեն  
և յես վոտաբոբիկ կմնամ»:

Վեր կացա, հազիվ իրարից բաժանեցի, մաքուր տրեխս  
դրեցի բարձիս տակ, կեղտոտին թողեցի գետնին ու կր-  
կին պառկեցի:

Առավոտյան վեր կացա, մաքուր տրեխս բարձիս տա-  
կիցը հանեցի, հազա, ուզում եյի մյուսն ել հագնել, տես-  
նեմ՝ չկա:

Յերեկ կեղտոտ տրեխս խոռվել եր, փախել:

Յերկու վոտիս մի տրեխս հազած ճամփա ընկա, վոր  
գնամ կեղտոտ տրեխս գտնեմ:

Գնացի, գնացի, շատն ու քիչն ել հայտնի չի, տեսա՛մի տան մեջ հարսանիք կա:

Պատուհանից նայեցի՝ տեսնեմ կեղտոտ տրեխս հյուրերին միս ե բաժանում:

Յես նրան աչքով արի, նա ինձ:

Ներս մտա: Բարև տվի, բարև առա ու մարդկանց կողքին նստեցի:

Հյուր եմ, վոր հյուր եմ:

Կեղտոտ տրեխս ինձ համար միանգամից տասնհինգ աման յուղոտ միս բերեց:

— Անուշ արա, աղա ջան, անուշ արա, — լնդրում եր նա:

Սոված փոքր, միս ու սխտոր... Կերա, ինչ կերամ:

Յեղանակը տաք եր, միսն աղի. ծարավեցի:

Ճամփա ընկա դեպի Արազը:

Գրտինքը գետի նման վրայիցս թափվում եր ու քըշքըշալով ճամփով հոսում:

Հասա Արազին:

Շոգից շունչս կտրվում եր, իսկ Արազը սառել եր:

Նայեմ՝ տեսնեմ ափին յերկաթե լինգեր կան: Ամենից յերկար ու ամենից ծանր լինգը վերցրի ու ընկա սառցի ջանին:

Թրանիկ հա թրանիկ, չրանիկ հա չրանիկ... Բան դուրս չեկավ:

Նն ահազին յերկաթե լինգը կտորվեց, իսկ սառուցը չկտորվեց:

Փափախս վեր կալա, քրտինքս սրբեցի ու ճակատս՝ թրճիկ, սառցին:

Սառուցը կտորվեց:

Մի կուշտ ջուր խմեցի և յետ դարձա, վոր ելի գնամ հարսանքատուն:

Տեսա՛ մի քանի վաճառական, եշերին խուրմա բարձած, տանում են Բաղդադ, վոր ծախեն:

— Բարով, ախպերացու, ճայն տվավ վաճառականը:

— Հազար բարին, — պատասխանեցի յես:

— Ի՞նչ նորություն կա:

— Վողջություն: Ի՞նչ ինչ նորություն ունեք:

— Մենք մի մեծ նորություն ունենք. մեր առաջ յերկու վոտին մի տրեխ հագած, կես գլխանի մի հիմար մարդ ե կանգնած:

Ձեռքս տանեմ ճակատս՝ տեսնեմ, ճիշտ վոր, գլխիս կեսը չկա: Ճակատս վոր խփել եմ սառցին, գլխիս կեսը պոկվել ե:

Յետ դարձա, վազեվազ հասա Արազին, ջրի մեջից գլխիս կեսը հանեցի, տեղը դրի և ահա վողջ ու սառոջ յեկել եմ աղջիկդ առնեմ:

Նանը ծիծաղեց:

«Այսպիսի սուտասան ճարպիկ փեսան միշտ պետք կգա» — մտածեց նա:

Մտածեց խանը, քառասուն որ, քառասուն գիշեր հարսանիք արավ ու աղջիկը հովվին տվավ:

Հարսանիքը վոր վերջացավ, հեքիաթս ել պրծավ:

1934

## Գ Ի Տ Ո Ւ Ն Ն Ե Ր Ն Ո Ւ Ա Ռ Յ Ո Ւ Ծ Ը

(ՆԵԴԱՍԱՆ)

Մի քաղաքում ապրում էյին յերեք գիտուն մարդ:

— Մենք հազարավոր դրքեր ենք կարդացել և շատ բան գիտենք, — սասցին նրանք, — ժամանակն ե, վոր ոտար յերկիրներ գնանք և մեր շնորհքը մարդկանց ցույց տանք:

Այդպես ել արին:

Իրենց հետ մի ծառա վերցրին և ճանապարհ ընկան:

Շատ գնացին, թե քիչ, հասան մի անտառի:

Անտառի միջով անցնելիս, նրանք սատկած առյուծի վոսկորներ տեսան:

— Ահա: Այժմ մենք կարող ենք ցույց տալ մեր իմաստությունը, — ասաց առաջին գիտունը: — Յես կարող եմ այս վոսկորները իրար միացնել:

Ինչպես ասաց, այնպես էլ արավ:

— Յես էլ կարող եմ վոսկորները մտով ու մորթով պատել, — ասաց յերկրորդ գիտունը և վոսկորները մտով ու մորթով պատեց:

— Դուք միացրիք վոսկորները, մտով ու մորթով պատեցիք, յես էլ կարող եմ կյանք տալ սատկած գազանին, — ասաց յերրորդ գիտունը:

Այստեղ ծառան մեջ ընկավ:

— Մի արա, — գոչեց նա, — յեթե առյուծին կենդանացնես, մեզ բոլորիս էլ կսպանի:

— Հիմար, — պատասխանեց յերրորդ գիտունը, — ինչպես կարող եմ իմաստությունս չգործադրել:

— Դե քիչ սպասիր, վոր յես բարձրանամ ծառը, — ասաց ծառան և շտապով ծառը բարձրացավ:

Յերբ առյուծը կենդանացավ, վեր թռավ ու յերեքին էլ սպանեց:

Իսկ ծառան զիշերը ծառից իջավ և անփորձ տուն հասավ:

1935

(ՆՆԴԿԱԿԱՆ)

Լինում է, չի լինում, մի տերտեր է լինում:

Մի հարուստ գյուղացի, իր յերեխայի կնունքին ես տերտերին մի վոչխար է տալիս:

Տերտերն ես վոչխարի վոտները պինդ կապում է, դնում ուրին և ճամփա ընկնում դեպի իրենց գյուղը:

Ճամփի հակառակ կողմից յերեք աղքատ եյին գալիս:

Տերտերի ուսի վոչխարը վոր տեսան, իրար ասացին:

— Յերեք որ է սոված ենք, արի տերտերին խաբենք, վոչխարը ձեռքիցն առնենք, մի լավ ճաշ անենք:

Նրանցից մեկը մոտեցավ տերտերին ու ասաց.

— Ամոթ չե՞, տերտեր, եդ շունն ուր ես տանում: Տերտերն էլ շուն կզնի ուսին:

— Կույր ես, ի՞նչ է, այ մարդ: Սա վոչխար է, թե շուն:

— Մի բարկանա, տերտեր: Յես ի՞նչ ասացի, հիմի դու գիտես:

Քիչ առաջ գնալով, տերտերը պատահեց յերկրորդ աղքատին:

— Բա ամոթ չի՞ տերտեր, եդ յերեխայի դիակն ուր ես տանում: Տերտերն էլ դիակ կշալակի:

— Ի՞նչ դիակ: Չես տեսնում, վոր վոչխար է:

— Դու գիտես, տերտեր: Յես ի՞նչ ասացի:

Ելի քիչ առաջ գնալով, տերտերը պատահեց յերրորդ աղքատին:

— Վայ, տերտեր, եդ հոտած մոթալն ուր ես տանում: Դեն գցի, դեն գցի: Փնւ, ինչ վատ հոտ է գալիս...

Տերտերը վոչխարը դեն գցեց և սկսեց փախչել:

Աղքատներն էլ հենց եդ եյին ուզում. վոչխարը մորթեցին, խորովեցին, կերան ու մի լավ կշտացան:

1935

## ՃՍՏԻԿ ԾԻՏԻԿԸ

(ՊԱՐՍԿԱԿԱՆ)

Լինում ե, չի լինում, մի ճատլիկ ծիտիկ ե լինում:

Մի որ ես ճատլիկ ծիտիկին մայրիկը մի կոպեկ փող ե տալիս:

Ծիտիկին սկսում ե մտածել. «Ինչի տամ ես կոպեկը. թե տամ թուզի, թուզը կոթ ունի, թե տամ արևածաղիկի սերմի, սերմը կեղև ունի, թե տամ ծիրանի, ծիրանը կորիզ ունի: Ավելի լավ ե, տամ բամբակի»:

Ճատլիկ ծիտիկը գնաց մի կոպեկի բամբակ գնեց ու տարավ թել մանողի մոտ:

— Նանի ջան, նանի, առ ես բամբակը մանի, կեսն ինձ, կեսը՝ քեզ:

Նանին բամբակից թել մանեց, ավեց ծիտիկին:

Ճատլիկ ծիտիկին ուրախ-ուրախ թելն առավ, վազեց կտավ գործողի մոտ.

— Բաջի ջան, բաջի, թելս առ կտավ գործի, կեսն ինձ, կեսը՝ քեզ:

Բաջին թելից կտավ գործեց, ավեց ծիտիկին:

Ճատլիկ ծիտիկին ուրախ-ուրախ կտավն առավ վազեց դերձակի մոտ.

— Քեռի ջան, քեռի, կտավս առ վերարկու կարի, մեկն ինձ, մեկը՝ քեզ:

Քեռին կտավից վերարկու գործեց, ավեց ծիտիկին:

Ճատլիկ ծիտիկին ուրախ-ուրախ վերարկուն հագավ, բարձրացավ շահի պալատի կտուրը և կանչեց.

— Շահ, այ շահ, իմ վերարկուն նոր ե, քոնը՝ հին, իմը՝ մաքուր-մաքուր, քոնը՝ կեղտոտ-կեղտոտ:

Ասաց ու փախավ:

Շահը շատ բարկացավ: Զորք հավաքեց, վոր գնա ճրստիկ ծիտիկին բռնի:

Իսկ ճատլիկ ծիտիկը բարձրացավ մինարեթը, ծայրին նստեց:

Նստել եր ճատլիկ ծիտիկը մինարեթի գլխին, նայում եր շահի գորքերին ու ծիծաղում:

1935



## ԽԱԲՎԱԾ ԾԻՏԻԿԸ

(ՊԱՐՍԿԱԿԱՆ)

Ասում են, վոր մեզանից հեռու, շատ հեռու մի աշխարհում մի պատլիկ ծիտիկ ե լինում:

Մի որ, ծառից ծառ, ճյուղից ճյուղ թռչելիս, ես պատլիկ ծիտիկի վտար փուշ մտավ:

Ծիտիկը թռավ, գնաց հացթուխ Ալու մոտ:

— Հացթուխ Ալի, այ հացթուխ Ալի, քո սփուսը հացով լիքն ե, քո կաթսան մտով լիքն ե: Արի վտախ փուշը հանի, յես գնամ դպրոց՝ գամ:

Հացթուխ Ալին ծախ վտախ փուշը հանեց, դրեց թոնրի կողքին, ինքը գնաց, վոր խմոր հունցի:

Յեկավ, տեսավ փուշն ընկել ե թոնիրը՝ այրվել:

Ծիտիկը դպրոցից վերադարձավ ու ասաց.

— Հացթուխ Ալի, այ հացթուխ Ալի, իմ փուշը տուր՝ Հացթուխը թե՛

— Փռչող ընկել է թռնիրը՝ այրվել:  
Ծիտիկը թե՛

— Հիմի յես ծուխ կանեմ, հիմի յես մուխ կանեմ, քո մի աչքը կհանեմ, իմ մի աչքը կհանեմ...  
— Դու ծուխ մի անի, դու մուխ մի անի, քո մի աչքը մի հանի, իմ մի աչքը մի հանի: Փշիգ փոխարեն քեզ մի լավ գաթա կտամ:


Ծիտիկը գաթան առավ, տարավ տվեց իր մորաքրոջը:  
— Մորաքույր ջան, մորաքույր, գաթաս առ, պահիր, պահպանիր, յես գնամ դպրոց՝ գամ:  
Մորաքույրը գաթան առավ ու կերավ:  
Ծիտիկը դպրոցից յեկավ ու ասաց.  
— Մորաքույր ջան, մորաքույր, իմ գաթան տուր:  
— Ծիտիկ ջան, ծիտիկ, քո գաթան ենքան յուղոտ եր, քո գաթան ենքան փափուկ եր, իսկ և իսկ պառավի առամների համար եր: Կերա:  
Ծիտիկը թե՛

— Հիմի յես ծուխ կանեմ, հիմի յես մուխ կանեմ, քո մի աչքը կհանեմ, իմ մի աչքը կհանեմ...  
— Դու ծուխ մի անի, դու մուխ մի անի, քո մի աչքը մի հանի, իմ մի աչքը մի հանի: Գաթիգ փոխարեն մի ուլիկ կտամ:  
Ծիտիկն ուլիկն առավ, տարավ իր տատի մոտ.  
— Տատի ջան, տատի, ես ուլիկը տար ձեր բակում կապի, յես գնամ դպրոց՝ գամ:  
Ծիտիկը դպրոցից յեկավ ու ասաց.  
— Տատի ջան, տատի, ուլիկս տուր.  
— Ծիտիկ ջան, ծիտիկ, քո ուլիկն ենքան չաղլիկ եր, քո ուլիկն ենքան փափլիկ եր, վոր մորթեցինք, հարսանիք արինք:  
Ծիտիկը սազը վերցրեց, նստեց կտրի ձերին, յերգեց ու ասաց.

Ուլիկիս մտով տատիկս  
Հարսանիք արավ,  
Տոտիկները թմբուկի համար  
Փայտիկներ արավ:  
Ուլիկիս մտով տատիկս  
Հարսանիք արավ,  
Աչիկները սենյակի համար  
Հայելի արավ:  
Ուլիկիս մտով տատիկս  
Հարսանիք արավ,  
Փափուկ փոստը թոռնիկի համար  
Տաք մուշտակ արավ:  
Ուլիկիս մտով տատիկս  
Հարսանիք արավ,  
Կարճլիկ պոչը, սրբելու համար,  
Նա ավել արավ:  
Ուլիկիս մտով տատիկս  
Հարսանիք արավ,  
Ականջները, ուտելու համար,  
Նա գդալ արավ...

Մին ել ծիտիկի ձեռքից սազը վայր ընկավ, ծիտիկը փախավ, հեքիաթն ել վերջացավ:

1935



## ԳԵԼԸ ՀԱՐԿԱԶԱՆ

### I

Վարպետ աղվեսը մի որ  
Չափչփորեց սար ու ձոր,  
Թռչուն, ճագար ու կաքավ  
Բռնեց, կերավ, կշտացավ:

Տուն դառնալու ժամանակ  
Ճամփին ընկած մի սպիտակ  
Թռչկթ նկատեց: Առնելով  
Ծոցը դրավ ապելով.  
«Սա ծոցումս թող մնա,  
Գուցե մի որ պետք կզա»:

Հենց ես խոսքը բերանին,  
Տեսավ՝ յեկավ գել քեռին:  
— Բարև, բարև, գել ընկեր,  
Ի՞նչ ես եղպես մուրրվել:  
Սոված հո չես, սիրելիս:  
Հը՞, ինչո՞ւ չես ձեն տալիս:  
— Մտեր մնա եսպես կյանք,  
Ամեն որ ցավ ու տանջանք.  
Ես հինգ որ ե, ճիշտ հինգ որ  
Բան չեմ կերել մի կտոր:

Աղվես ախպեր, դու հագար  
Լեզու գիտես ու հնար,  
Ի՞նչ կլինի մտածես՝  
Սովի ձեռքից ազատես:

— Յես կուրանամ, գել ընկեր,  
Ի՞նչ վատ որի յես յեղել:  
Հիմի յել վոր քեզ չոգնեմ՝  
Լսողներն ի՞նչ կասեն:  
Լսիր: Հագար հնարքով,  
Մնասելի տանջանքով,  
Մարդիկ, կաշառք, միջնորդներ  
Մեջ եմ գցել ու առել  
Մեծ իշխանից հրաման,  
Վոր այսուհետ անխավան  
Ես գյուղերի աներից  
Ամիսը մի հավ տան ինձ:  
Բայց սոված չեմ յես հիմի:  
Գնա գյուղն են դեմի,  
Տար իմ թուղթը, թող կարգան,  
Հավեր բերեն ու քեզ տան:  
— Այ ապրես դու, այ աղվես,  
Տեսնեմ՝ դու չպառավես:  
Դե՛, տուր թուղթն իշխանի,  
Տանեմ՝ փորիս դեղ անի:  
— Ա՛ռ, ախպեր ջան, թուղթը տար,  
Շուտ գնա, իմ հարկն առ,  
Ինչքան ուզում ես, դու կեր,  
Ինձ համար ել բաժին բեր:

### II

Թռչկթը ձեռքին նա հսկարտ  
Գյուղը մտավ լուռ, հանդարտ:  
Գյուղամիջում հավաքված

Ժողովրդին նա ասաց,  
 — Լսե՛ք, մարդիկ, տանուտեր,  
 Գզիր, քյոխվա ու տերտեր,  
 Գյուղի ջոջեր պատվական,  
 Մեծ իշխանի հրաման.  
 Այ, գրված է ես թղթում,  
 Վոր անխտիր ամեն տուն.  
 Մի հավ տա ինձ ամսական:  
 Դե՛, վորրդ եք գիտնական,  
 Գիրս առե՛ք, կարդացե՛ք,  
 Հարկս բերեք ու տվեք:  
 — Ծաղկաթավալ անպիտան,  
 Ի՞նչ իշխան, ի՞նչ հրաման:—  
 Ասին մարդիկ ու յելան,  
 Ի՞նչ ես կերել՝ թթու թան:  
 Յելան՝ ու վոչ մեռնես դու՝  
 Գյուղն անցավ իրարու.  
 Առան մահակ ու կոպալ,  
 Ել մի հարցրու քեռու հալ:  
 Շներն ել ես ազմուկից  
 Դուրս թափվեցին բակերից,  
 Քեռուն մի լավ գզեցին,  
 Տարան՝ գյուղից հանեցին:

### III

Քեռին վախից շտապով,  
 Շուտ-շուտ յետև նայելով,  
 Վազ եր տալիս դեպի տուն  
 Յեվ ինքն իրեն մըթմըթում.  
 «Տո՛, եսպես ել մարդ ու շուն,  
 Իշխանին ել չեն լսում»:


Մին ել ազվեսը դեմից  
 Դեպի քեռին ե գալիս:



— Իմ բաժինը, գել ընկեր,  
Ի՞նչ ես եղպես չափ ընկել՞  
— Տո ի՞նչ բաժին ու ի՞նչ հարկ,  
Գյուղում յեղա խայտառակ,  
Պատիվ տալու փոխարեն  
Քիչ մնաց, վոր սպանեն:  
— Ի՞նչ... Քեզ ծեծեց գյուղացի՞ն...  
Բա թղթին ի՞նչ ասացին...  
— Այ անիծվի ենպես գյուղ,  
Վնչ ան ունեն, վնչ յերկյուղ՞  
Հազար մարդ կա, հազար շուն,  
Բայց բոլորն ել անուսում.  
Մեկը չեղավ, վոր կարդա,  
Հասանելիք հարկը տա...

1913





## ՈՒՂՏՆ ՈՒ ԵՇԸ

«Ուղտի պարը կամբջի վրա կբռնի»:  
Ժողովրդական առած

### I

Ասում են, վոր մի ժամանակ,  
Ել չգիտեմ՝ սուտ, թե շիտակ,  
Ճամփին մտտիկ մի անտառում  
Գյուղից փախած եշ եր ապրում:

Մարդուց հեռու, բեռից ազատ  
Միրտը հանգիստ, ուրախ, հպարտ  
Քեֆ եր անում մեն ու մենակ  
Մոռցած փալան, գոռ ու մարագ:

Որվա մի որ ես իշի մոտ  
Հոգնած, դադրած, նիհար, փոշոտ  
Այլանդակ ու յերկարավիզ  
Մի ահագին ուղտ ե գալիս:

— Գալի բարի, ծուռտիկ ախպեր,  
Նստիր շունչ առ, ինչ ես կանգնել:  
Ինձ ել վաղուց մի պատվական  
Ընկեր եր պետք ճիշտ քեզ նման:

— Շնորհակալ եմ, գոռան ախպեր,  
Անտեր բեռից եմ յես փախել:  
Մարդու ձեռքին թե ուղտ, թե եշ,  
Աշխատասեր, թե ծուլ, թե գեշ,  
Գերու նման ամբողջ տարին  
Ցավ են քաշում բեռան տակին:  
Յես ել, ախպեր, չդիմացա,  
Յեկա թաքուն ընկա ճամփա,  
Յեկա ապրեմ մերու միջին  
Եշ ախպորս հետ միասին:

— Լավ ես արել, գալի բարի,  
Ինչո՞ւ լինենք մարդուն գերի:  
Աչքիս վրա՝ դառնանք ընկեր,  
Ապրենք մե տեղ, լինենք ախպեր:  
Ու են որից անտառի մեջ  
Ընկեր յեղան ուղտն ու եշ,  
Յեվ շատ որեր հոժար, սիրով  
Ապրում եյին քեֆ անելով:


### II

Մի որ եշը մեր գերացած  
Ուղտ ընկերոջ ուրախ ասաց:

— Ծուռտիկ ախպեր, վաղուց ե, վոր  
Յերգ չեմ ասել. կուզեմ եսոր  
Անուշ խնդամ, ձայնս զլեմ,  
Մի յերգ ասեմ, արախնդ անեմ:

— Վայ, ինչ ասիր, գոռան ախպեր,  
Եդ ինչ վատ բան ես մտածել:

Ախր չե՞ վոր՝ ձենդ լսեն  
 Մարդիկ կզան՝ մեզ կտանեն:  
 Արի, լսիր խոսքը ծերի,  
 Վոր չզառնանք կրկին գերի:  
 Յերգ ու տրտինդ չեն հարկավոր,  
 Թող եղ միտքդ վաանգավոր:



Բայց իշուկի քեֆը տեղն եր.  
 Ինչ ել լիներ՝ յերգել կուզեր.  
 Ականջ չարավ ընկեր ուղտին,  
 Վիզը ձգեց, ձայնով ուժգին  
 Յերգը զլեց: Այդ ժամանակ  
 Մոտիկ ճամփին, անտառի տակ  
 Հանգստանում եր մի քարվան:  
 Եղ քարավանի մարդիկ յեկան  
 Անտառ մտան, իշին, ուղտին  
 Շուտով գտան, ու բեռնեցին:

Ու քիչ հեռո փոշոտ ճամփով,  
 Բեռան տակին անքանքալով,  
 Ուղան ու եշը տխուր, արտում  
 Դեպի քաղաք եյին գնում:

III


Ամառվա տաք, այրող կեսոր,  
 Ճամփեն քարոտ, վոլոր-մուլոր,  
 Ո՞ւժ կմնա ել իշի մոտ,  
 Գերի ընկած, սիրտը վշտոտ:  
 Մի քիչ ել անց, ճամփի միջին,  
 Ուժը հատավ, փովեց գեանին:  
 Հրհրեցին դեսից, դենից,  
 Բաշքշեցին գլխից, պոչից,  
 Հնար չեղավ: Վերջը բերին  
 Խեղճ ծուռտիկին չոքացրին,  
 Յեւ իշուկին իրա բեռով  
 Նրա մեջքին դրին գոռով:  
 Ուղտը ծանր բեռան տակին  
 Անիծում եր ընկեր իշին,  
 Վոր չլսեց ծերի խոսքին  
 Փորձանք բերեց իրենց գլխին:

IV

Եսպես անցան սարեր ու ձոր,  
 Բարոտ ճամփեք վոլոր-մուլոր,  
 Շատն ու քիչն ել հայտնի չի,  
 Վերջը հասան մի կամրջի:  
 Եստեղ ուղտը, ձայնով կամաց,  
 Եշ ընկերով ցածից առաց.  
 —Մի ինձ լսիր, զոռան ախպեր,  
 Վաղուց ե վոր յես չեմ պարել:

Հիմի վոր յես ես կամրջի  
 Վրեն պարեմ՝ հո չի՛ փլչի:  
 — Ծուռտիկ ախպեր, խելքի արի,  
 Ո՛վ ե լսել՝ ուղտը պարի:  
 Փորձանք կզա, մաքիցդ հան,  
 Թող վողջ հասնենք մեր ոթևան:  
 Բայց ուղտն իր բանը գիտեր.  
 Իշից վրեժ հանել կուզեր.  
 Վտոր դրավ են կամրջին  
 Ու սկսեց իր վերվերին:  
 Եշն ինչքան լեզու թափեց,  
 Ուղտը կարծես թե չսեց:  
 Մին ել... Շրը՛ մի... Մեր խեղճ իշին  
 Տեսան ձորի ջրի միջին:

1912





**ԻՐՐԶԿԱՆ, ԶԻՆՐԶԿԱՆ ՈՒ ՆԻՆՐԶԿԱՆ**

Իրրչկան ու Զինրչկան,  
Մին ել պատիկ Նինրչկան  
Մի խնձոր,  
Մի կանֆետ,  
Մի սալոր  
Ունեյին:

Իրրչկան ու Զինրչկան,  
Մին ել պատիկ Նինրչկան  
Խնձորը,  
Կանֆետը,  
Սալորը  
Պետք է կիսեյին:

Իրրչկան ու Զինրչկան  
Խնձորն առան՝ կիսեցին.  
Կեսն Իրրչկին,  
Կեսը Զինրչկին,  
Կոթը Նինրչկին  
Տվեցին:


Իրրչկան ու Զինրչկան  
Կանֆետն առան՝ կիսեցին.  
Կեսն Իրրչկին,  
Կեսը Զինրչկին,

Թուղթը Նինըչկին  
Տվեցին:

Իրըչկան ու Չինըչկան  
Սալորն առան՝ կիսեցին.  
Կեան Իրըչկին,  
Կեսը Չինըչկին,  
Կուտը Նինըչկին  
Տվեցին:

Ուրախ ե մեր Նինըչկան,  
Վոր լավ բան ունի այնքան.  
Խնձորի կոթը՝  
Ծուռտիկ,  
Կանֆետի թուղթը՝  
Նախշուն,  
Սալորի կուտը՝  
Պատլիկ:

1929



ՊԱՎԼԻԿ ՄՈՐՈՋՈՎ  
(Մ. ԴՈՐՈՇԻՆ)

1

Գունաթափ լճեր,  
Անտառ անթափանց,  
Գյուղը քաղաքից  
Հեռու յե ընկած:

Մի կորած գյուղում,  
Ուրալի խորքում,  
Այստեղ, Պավլուշա,  
Քո կյանքն եր ծաղկում:  
Այստեղ լուսինը,  
Վոր մեծ յերևա,  
Յեղնում ե կարծես,  
Յեղևնու վրա,  
Բայց արևը վառ  
Անտառի միջից,  
Զեռքով ե անում

Ու սսում. «Իջիր»:  
Այստեղ արջ ու գայլ,  
Խորամանկ աղվես,  
Տներն են մտնում  
Շան ու կատվի պես,  
Տներն են մտնում  
Վորպես բարեկամ,  
Ու մին եւ տեսար՝  
Գնացին, չկան:  
Բայց այդ գեշատիչ  
Արջ, գայլ, աղվեսից  
Գյուղում բավական  
Վատթարները կան:  
Հագնում են նրանք  
Շան մորթուց մուշտակ  
**Յե՛կ** արջի ձայնով  
Ասում են հանդարտ.

«Մենք հավատարիմ  
Շներ ենք, գիտե՛ք,  
Մեզանից վնաս  
Չի գա ձեզ յերբեք»:  
Բայց վոր լավ նայես՝  
Հայացքը, վորպես  
Խորամանկ աղվես,  
Սպառնում է քեզ:

2

Կանչում են նրան  
«Պաշկա կոմունիստ».  
Ի՞նչ անենք՝ փոքրիկ,  
Լեզվանի յե խիստ:  
Նոր է լրացրել

Տասներեք գարուն,  
Կարմիր վզկապն է  
Վզին փայլփլում:  
Քեռու գլխարկն է  
Քաշել աչքերին,  
Բայց մի նայեցեք  
Նրա գործերին.  
Փայտ է կտորտում  
Մայրիկի համար,  
Նոր ու նոր բաներ  
Գիտի անհամար,  
Իպրոց է գնում,  
Աշխատում աշխուժ,  
Խաղում, հավաքում  
Նոր յեռանդ և ուժ,  
Վնչ մի ժամանակ  
Չի լինում տխուր,  
Գիրքն ու տետրակը  
Պահում է մաքուր,  
Մրած է պահում  
Ծայրը մատիտի...  
Ամեն պիտներ  
Նրա պես պիտի:

Յերբ արևմուտքում  
Վառվում է ալ բոց,  
Պավլուշան խսկույն  
Վազում է դարոց:  
Այստեղ՝ յեղբայրը՝  
Ֆեռական պատրիկ,  
Մոտենում նրան,  
Ասում է.

— Պավիկ,  
Ինչո՞ւ շրջումը

Կոլվար չուղարկեց:  
Գիտես, Պավլո՛ւշա,  
Մոռացել են մեզ:  
Հուել ե վաղուց  
Կանչը շեփորի,  
Տխուր ե, մոայլ  
Դեմքը բոլորի,  
Չկան ել զվարթ  
Խաղ, զրույց, յերգեր...  
Մեր կոչեկախը  
Այս որն ե ընկել.  
Ասա՛, ի՞նչ անենք.  
Շվարել ենք մենք:

Պավլուշան իսկույն  
Չայնով մարտական,  
Տալիս ե նրան  
Կտրուկ պատասխան.

— Դե վոր ասում ես  
Մարդ չկա հարմար,  
Թողեք յես լինեմ  
Ձեզ համար կոլվար:  
Կանգնեցեք շարքի,  
Գնանք մարզանքի:  
Մեկ, յերկու՛ յերեք...  
Ձեզ կարգի բերեք:

3

Յանկապատերին,  
Գյուղի պատերին,  
Գրել են, կախել  
Մեծ պլակատներ:  
Անցնող, դարձողը  
Դրանց մոտ կանգնած,

Աչքը չորս արած  
Կարդում ե կամաց.  
«Կուլականովը,  
Կուլակը հայտնի,  
Հավ իմացեք, վոր  
Գող ե ցորենի»:

Հազար-հազար  
Կրծքի վրա  
Ալ փողկապներ  
Են ծաղկում,  
Հազար-հազար  
Պիոներներ  
Նույն յերգերն  
Են յերգում...  
Յեվ Պաշկան հավեա  
Իր գործերի հետ,  
Նրանց հետ մեկ տեղ,  
Այստեղ ե, այնտեղ:

4

Այս ու այն կողմից  
Ճանի՛ճ ե, ճանի՛ճ,  
Պիոների ճամփան  
Փակում ե մի բան:  
Քամի՛ն ե արդյոք,  
Անտանոն անթափանց,  
Թե լուրթյունը  
Խոր, համատարած,  
Թե ներքև իջած  
Մոխրագույն մի ամպ...

Ե... Պավլուշային  
Պատահեց մի պապ՝  
Կուլականովը՝

Են հարուստ գողը:  
Դուրս յեկան շտապ  
Դարձյալ յերեք պապ:  
Դուրս յեկան նրանք  
Խողի պես հաստ, մեծ  
Յեզ Պավլուշային  
Առան իրենց մեջ...

— Պավլիկ, Պավլիկ,  
Վորդի, տես,  
Դու այս անգամ  
Լսիր մեզ.  
Թող կոլեկտիվ,  
Ժողովներ,  
Ել մի լինի  
Պիոներ:  
Իսկ յեթե մեզ  
Չլսես,  
Քեզ կմորթենք  
Հավի պես...

5

— Բարև՛ քեզ, բարև՛,  
Սերեզա պապի,  
Յեկ խոստովանի  
Ու մեզ մի խաբի.  
Կուլազանովի  
Մի սայլ ցորենը  
Թազցրել ես դու  
Այստեղ, քո տանը:  
Դա մեր կոլխողի  
Ցորենն է, դիտես.  
Պետք է շուտ տանես,  
Պահեստը հանձնես:  
Ի՞նչ դու խոլ ես,

Սերեզա պապի.  
Ցորենը հանի:  
Դե շուտ, շտապիր...  
.  
.  
.  
— Յեթե դու մեզ  
Չլսես,  
Քեզ կմորթենք  
Հավի պես...

6

Բեղարած գյուղը  
Վաղուց եր քնած,  
Յերբ մեր Պավլուշան  
Գյուղխորհուրդ գնաց:  
Կանգնած է դրսում,  
Պատուհանի մոտ,  
Իսկ այնտեղ, ներսում,  
Մեծ սեղանի մոտ,  
Նախագահ հայրը,  
Մի քանի կուլակ,  
Կամացուկ ձայնով  
Խոսում են շտապ:  
«Ուրեմն կրկին  
Ալան ու Թալան,  
Կրկին կոլխողի  
Բերքը գողանան»...

Իսկ շուրջը լճեր,  
Անտառ անթափանց,  
Գյուղը քաղաքից  
Հեռու յե ընկած:  
«Յես կերթում շրջում,

Կասեմ ամեն բան,  
Թող տանեն, դատեն  
Ու պատժեն նրան:  
Թող պատասխանի  
Նա դատարանին՝  
Ինչո՞ւ յե այդպես  
Ոգնում կուլակին,  
Վոր լուռ ու թաքուն,  
Տեղերո մ հարմար,  
Մեծ փոսեր փորեն  
Յորենի համար...

7

Կուլականովը,  
Հարուստ, անվանի,  
Իր մառաններում  
Ողի շատ ունի:  
Նրա սենյակում  
Բազմել են այսոր  
Գյուղի գիշատիչ  
Գելերը բոլոր:  
Բազմել են նրանք  
Շուրջը սեղանի,  
Յեվ խմում առատ  
Ողի ու գինի:

— Հարևան Դանիել,  
Մաքուր չես խմել:  
Դե, դուք ել, դուք ել:  
Ինչո՞ւ յեք լուել:  
Խմում ե, խմում  
Դանիելը անվերջ,  
Յեվ խուզոտ ձայնով

Յերգում մեջ ընդ մեջ:  
Ինչո՞ւ նա պիտի  
Ուրախ չլինի.  
Արժե՞ մտածել,  
Փող ե խոստացել:  
Փող ե խոստացել  
Յերեսուն մանեթ,  
Մի սուր դանակ ել,  
Ընծա դրա հետ:  
— Բաժակներդ լի,  
Յեղբայրք սիրելի:  
Հիշենք ցորենը,  
Արածն են տղի  
Յեվ են խայտառակ  
Թղթերը գյուղի,  
Թե ինչպես յեղանք  
Մենք ծաղր ու ծանակ  
Ու վտաքի կանգնած  
Ասենք. «Տեր աստված,  
Դու Դանիել աղի  
Գործը հաջողի»...

8

Հենց կուլակների  
Բեֆի միջոցին,  
Պավլիկն ու Ֆեդյան  
Անտառ դնացին:  
— Յելակի համար  
Մի գնա անտառ,  
Յետ նայիր ու տես՝  
Հետեվում են քեզ:

Ճանապարհ ընկավ  
 Դանիելը հարբած,  
 Ընծա դանակը  
 Գրպանում պահած:  
 — Ինչո՞ւ յես լալիս,  
 Ֆեդկա, սիրելիս:  
 — Ել մի ուշացնի,  
 Դանիել հարեան,—  
 Ասում է կամաց  
 Ընկերը նրան:  
 — Պավլո՞ւշա, բալես,  
 Քո պապին եմ յես:  
 Արի բան տամ: Այ:  
 — Վսյ...  
 — Ֆեդկան, շտապիր,  
 Փախիր, ազատվիր...  
 Ոձեր են սրանք  
 Նենգ ու խորամանկ...  
 — Չե, դու չես գնա:  
 Առ քեզ ել... Ահա...

9

Մամուտ յեղևնու  
 Մառերի տակին  
 Պավլիկն է ընկած  
 Ֆեդկան ել կողքին,  
 Յեվ խորհրդավոր  
 Նրանց հանգստից  
 Մամուտ ծառերին  
 Պատել է թախիժ...

Ու ձեր անտառում  
 Խորին լուսթյուն...



Մամոստ յեղևնու  
 Ծառերի տակին  
 Պավլին և ընկած,  
 Ֆեդկան ել կողքին:  
 Չի գնա յերբեջ  
 Կովարը հերոս,  
 Խաղի, մարդանքի,  
 Հավաքույթ, դարոց...  
 Բայց անտառը  
 Վառ արևի  
 Փայլը ծածկել  
 Չի կարող,  
 Յեվ Պավլուշան  
 Իրա գործով  
 Կենդանի յե  
 Ու հաղթող:  
 Պավլին տեղ  
 Ուրիշ սխոներ  
 Կգնա ու  
 Կնստի,  
 Կիսատ դասը  
 Նրա գրչով  
 Կզբի ու  
 Կավարտի:  
 Հազար-հազար  
 Կոլեկտիվում  
 Նրա գործերը  
 Կերգեն,  
 Հազար-հազար  
 Կրծքի վրա

Ալ փողկապներ  
Կծաղկեն:  
Իսկ դու, Պանկիկ,  
Քո դորժի հետ  
Միատեղ,  
Միշտ ել կապրես  
Այստեղ,  
Այնտեղ,  
Ամեն տեղ...

93

## Մ Ի Ո Ր Ի Կ Ն Ե Ր

(Վ. ԲԻԱՆԿԻ)

### I

Խոր առվակի հատակում ապրում եյին պատլիկ, փըր-  
չոտ թրթուրներ:

Նրանց չորս կողմից շրջապատել եյին թշնամիներ՝  
ձկները, շերեփուկները, լողացող բզեզը և ջրային ուրիշ  
սարսափելի կենդանիներ:

Թրթուրները թշնամիներից թաքնվել եյին աղմի մեջ:  
Նրանք կերակրվում եյին ջրային փտած խոտերով և  
չեյին համարձակվում հատակից բարձրանալ:

Խորքում ջուրը պղտոր եր ու ծանր:

Իսկ ջրից վեր,

Յեզերքում,

Ինչքան լավ եր,

Ի՞նչ սիրուն.

Ջինջ ու կապույտ

Յերկնքում

Գարնան արևն եր

Փայլում,

Ճպուռները

Գույնզույն

Խաղում եյին

Ու յերգում,



Ողում լողում  
Վար ու վեր  
Ամպի սպիտակ  
Քուլաներ...

II

Այսպես անցավ  
Հազար որ...  
Յե՛վ առվակով  
Ամեն որ  
Ջուրը հոսում եր,  
Հոսում,  
Թաքուն խոսում,  
Փսփսում,  
Իսկ յերբ ձմեռն եր  
Գալիս,  
Ջուրն էլ ձեն  
Չեր տալիս.  
Պապանձվում եր  
Ու սառչում,  
Մերկ ափերին եր  
Կաշում:  
Բայց հենց գալիս եր  
Գարուն,  
Յե՛վ որերը,  
Տաքանում,  
Ջուրը յերգում եր  
Կրկին  
Իր հին յերգերը  
Ուժդին...

Հազար-հազար թրթուրներ վխտում էյին տղմի մեջ, թաք-

նրվում թշնամիներեց, կերակրվում ջրային փոսած խոտե-  
րով և վնչ մի անգամ արեգակի յերեսը չէյին տեսել:

Հազար ու մեկերորդ որը մի գարմանալի բան պա-  
տանեց. թրթուրները լողալով դուրս յեկան հատակից և  
նստեցին առվակի ափի յեղեգների վրա:

Աշնան գով իրիկուն եր:

Փայլուն արևի շողերը գունազարդել էյին կապտա-  
գույն անտառը:

Թրթուրները, յեղեգների վրա նստաած, ազահաբար  
ծծեցին թարմ ողը:

Ծծեցին, ծծեցին, նրանց տափակ մարմիններն ուռան,  
փքվեցին, բարակ մորթիները տրաքվեցին, ջուրը թափվեցին:  
Իսկ յեղեգների վրայից վեր բարձրացան թեթև-թեթև  
միտրիկներ:

Նրանք ուղղեցին իրենց քողի պես բարակ թևիկները  
յերկարացրին յերեք թելիկներից բաղկացած պոչիկները և  
ողում պարել սկսեցին:

Ինչպես բուքի

Հանդիպած

Փափուկ ձյունի

Փաթիլներ,

Այնպես էյին

Սլանում

Նրանք ողում

Վար ու վեր,

Ապա բռնում

Շուրջպարի

Կատարներում

Ամպերի,

Հետո կարծես

Թե հողնած

Թուչում էյին

Դեպի ցած,  
Թևին տալիս  
Ու կրկին  
Հասնում սպիտակ  
Ամպերին...

Իսկ ներքևում նրանց սպասում էյին թշնամիները:  
Ձկները դուրս էյին հանել ջրից իրենց լալիկ բերան-  
ները և կարծես մտածում էյին. «Մեզանից չեն ազատվի-  
ողում ուտելու բան չկա. կխաղան, կպարեն, կքաղցածա-  
նան, կիջնեն դեպի առվակը և մենք—հասփ—կբռնեք  
նրանց»:

Իսկ միորիկները խաղում էյին ողում:  
Նրանք չգիտեյին, թե ինչ է քաղցը, ուտել չգիտեյին,  
մինչև անգամ բերան ել չունեյին:

Յեղեգնի մեջ նստած սարդը նկատեց միորիկներին  
ու մտածեց. «Կպարեն, կհոգնեն ու կնստեն յեղեգնի վրա  
հանգստանալու: Կփռեմ անտեսանելի ուռկանս և կվորսամ  
բոլորին»:

Յերկու յեղեգների արանքում հինեց իր վոստայնը և  
սկսեց գործել:

Գործեց, գործեց, յեղեգների արանքը կտրեց բարակ,  
անտեսանելի վոստայնով:

Վոստայնի մեջտեղին ամրացրեց մի բարակ թել, թելի  
ծայրը փաթաթեց իր յետևի վոտին ու թաք կացավ:

Թաք կացավ տերևների յետևում և սպասում եր. յեթե  
գիպչեյին վոստայնին, թելը նրա վոտը կքաշեր և իմաց  
կտար, թե վորսը բռնվել է:

Սպասում են ձկները, սպասում է սարդը:

Իսկ միորիկները՝

Խաղ են անում

Ու պարում

Պայծառ ողի  
Ծալքերում,  
Բռնում ուրախ  
Շուրջպարի  
Կատարներում  
Ամպերի,  
Ապա կարծես  
Թե հոգնած  
Սլանում են  
Դեպի ցած,  
Թևին տալիս  
Ու կրկին  
Հասնում սպիտակ  
Ամպերին:  
Ու չեն հոգնում  
Քնքուշիկ  
Թևիկները  
Թափանցիկ:

Նրանց ամբողջ մարմինը լցվել էր ողով ու դարձել  
թեթև, բմբուլից ել թեթև:

Թռավ յեկավ ու նստեց առվակի ափին շատակեր  
խաղատնիկ թռչնիկը:

Բան էր վորոնում, վոր քնելուց առաջ ուտի՝  
վեր նայեց. «Ոհո, ինչ շատ են»,—մտածեց նա: Թե-  
վին տվավ ու սլացավ:

Շտապելուց թևը դիպավ սարդի վոստայնին:  
Թելը քաշեց սարդի վոտը:

Սարդը վազեց դեպի թռչնիկը, ու ահից—չլը մփ—  
ջուրն ընկավ:

Ձկները վախից թաքնվեցին առվակում:  
Խաղատնիկ թռչնիկը վերադարձավ, նստեց առվակի

ափին և սկսեց կացով մաքրել վտտները, վորոնց փաթաթ-  
վել էր սարդի կաշուն վոստայնը:

Ձկներն անցան առվակի խորքը:

Սարդին շուրը տարավ:

Ամենքը մոռացան միտրիկներին:

### III

Իսկ միտրիկները, վոր

Խաղում էին

Ու պարում

Պայծառ ողի

Ծալքերում,

Բռնում ուրախ

Շուրջպարի

Կատարներում

Ամպերի,

Ապա կարծես

Թե հոգնած

Թռչում էին

Դեպի ցած,

Թեին տալիս

Ու կրկին

Հասնում սպիտակ

Ամպերին,

Ցած իջան և սկսեցին փոքրիկ-փոքրիկ ձվեր ածել  
առվակի ջրի մեջ:

Արևը մայր մտավ:

Ամբողջ գիշերը վտտում էր բուրբ:

Թեթև-թեթև ձյունի փաթիլները թափվում էին ու  
թափվում...

Ու յերբ կրկին արևը ծաղեց, առվակի ափը սեփ-  
ախտակ էր, և ձյունի վրա ընկած էլին մեռած միտրիկ-  
ները...

### IV

Միտրիկները մեռան,

Բայց դուրս կգան

Ձվերից

Պատիկ, փրչոտ

Թրթուրներ,

Վորոնք հազար

Որից հետ

Դուրս կթռչեն

Հատակից,

Միտրիկներ

Կղանան

Թեթև-թեթև

Ու սիրուն,

Վորոնք ուրախ

Կխաղան

Պայծառ ողի

Ծալքերում:

1929

## ՀԻՄԱՐ ՄԿՆԻԿԸ

(Ս. ՄԱՐՏԱԿ)

— Քնիր, մանկիկ իմ սիրուն,—  
Մուկն եր յերգում իր բնում,—  
Կտամ քեզ մոմ, չորուկ հաց,  
Քնիր, բալիկ իմ սիրած:

Պատասխանեց մկնիկը.  
— Բարակ ե քո ձայնիկը:  
Գնան, մայրիկ, մի հարմար  
Իայակ ճարիր ինձ համար:

Մայր մկնիկը շուտ վազեց  
Բազիկ տատին աղաչեց.  
— Բազիկ տատի, շուտ արի  
Մեր Բուլիկին որորի:

— Քնիր, քնիր իմ անզին,—  
Յերգեց բազը սրտազին,—  
Յես են այգուց մի յերկար  
Վորդ կբերեմ քեզ համար:

Հիմար փոքրիկ մկնիկը  
արձրացրեց գլխիկը,  
Պատասխանեց կիսաբթուն.  
— Շատ բարձր ես դու յերգում:

Մայր մկնիկը շուտ վազեց,  
Կռան գորտին աղաչեց.  
— Գորտիկ, գորտիկ, շուտ արի  
Մեր Բուլիկին որորի:

— Կր՛ո, կր՛ո, մկնիկ աննման,—  
Յերգեց գորտը կռկռան,—  
Լաց մի լինի, իմ հողյակ,  
Յես քեզ կտամ մի մոծակ:

Հիմար փոքրիկ մկնիկը  
Բարձրացրեց գլխիկը,  
Պատասխանեց կիսաբթուն.  
— Շատ տխուր ես դու յերգում:

Մայր մկնիկը շուտ վազեց  
Գեր խոզուկին աղաչեց.  
— Խոզիկ, խոզիկ, շուտ արի  
Մեր Բուլիկին որորի:

— Խը՛ո, խը՛ո, քնիր, աննման,—  
Յերգեց խոզը խոխոան,—  
Թե վոր դու լաց չլինես,  
Մի մեծ գազար կտամ քեզ:

Հիմար փոքրիկ մկնիկը  
Բարձրացրեց գլխիկը,  
Պատասխանեց կիսաբթուն.  
— Շատ կոպիտ ես դու յերգում:

Մայր մկնիկը շուտ վազեց,  
Նժույզ ձիուն աղաչեց.  
— Ձի բարեկամ, շուտ արի  
Մեր Բուլիկին որորի:

— Գնիր, սիրուն իմ մկնիկ,—  
Յերգեց նժուլդն անուշիկ,—  
Լաց մի լինի, իմ հոգեակ,  
Գարի կտամ մի քսակ:

Հիմար փոքրիկ մկնիկը  
Բարձրացրեց գլխիկը,  
Պատասխանեց կիսարթուն.  
— Սարսափելի յես լերգում:

Մայր մկնիկը շուտ վազեց  
Գայլաձուկին աղաչեց.  
— Ձկնիկ, ձկնիկ, շուտ արի  
Մեր Բուլիկին որորի:

Ձուկը լերգել սկսեց,  
Բայց վոչ մի ձայն չլսվեց,  
Լայն բացել եր բերանը,  
Իուրս չեր գալիս իր ձայնը:

Հիմար փոքրիկ մկնիկը  
Բարձրացրեց գլխիկը,  
Պատասխանեց կիսարթուն.  
— Շատ ցածր ես դու լերգում:

Մայր մկնիկը շուտ վազեց  
Սև փիսիկին աղաչեց.  
— Սևուկ փիսիկ, շուտ արի  
Մեր Բուլիկին որորի:

— Միանւ, միանւ, իմ բալիկ,—  
Յերգեց փիսոնն անուշիկ,—  
Միանւ, պառկենք դու և յես,  
Շատ եմ սիրում, ջանիկ, քեզ:

Հիմար փոքրիկ մկնիկը  
Բարձրացրեց գլխիկը,  
Պատասխանեց կիսարթուն.  
— Ա՛խ, ինչ լսվ էս դու լերգում:

Մին ել վազեց մկնիկը,  
Տեսնի՛ վճնց ե բալիկը:  
Նայեց այստեղ ու այնտեղ՝  
Բալեն չկար վոչ մի տեղ:

1935

ցրեմնն թիղգոփ դանդի  
պիկնայր քնդրադձոցա  
մանկցասկի բնմասխառաթ  
մասորդի տր սմ լնայ չոմ այ՝

ԱՐՈՏ ԱՂՋԻԿԸ

(FURSON)

— Այ պատիկ  
Աղջիկ,  
Այ մրոտ  
Աղջիկ,  
Դու այդ ուր ես  
Գնացել,  
Ձեռ ու շորդ  
Սևացրել:

— Արևի տակ  
Պառկեցի,  
Ձեռներս վեր  
Պարզեցի,  
Սևացան՝  
Այսպես դարձան:

— Այ պատիկ  
Աղջիկ,  
Այ մրոտ  
Աղջիկ,  
Դու այդ ուր ես  
Գնացել,  
Բթիդ ծայրը  
Սևացրել:

— Արևի տակ  
Պառկեցի,  
Գիթս վերև  
Ցցեցի,  
Սևացալ՝  
Այսպես դարձալ:

— Այ պատիկ  
Աղջիկ,  
Այ մրոտ  
Աղջիկ,  
Դու այդ ուր ես  
Գնացել,  
Շոր ու վոտդ  
Սևացրել:

— Արևի տակ  
Պառկեցի,  
Վոտներս վեր  
Պարզեցի,  
Սևացան՝  
Այսպես դարձան:

— Ճիշտ ես ասում  
Դու արդյոք,  
Պատիկ աղջիկ  
Սև, կեղտոտ:  
Ի՞նչ է, ի՞նչ է  
Գո ճարը,  
Բերեք տաշտն ու  
Ոճառը,  
Լողացնեմ՝  
Մաքրեմ:

Հաց ե լինում  
Աղջիկը,  
Կախ ե արել  
Դնչիկը.

— Ձեռ չտաք  
Թաթիս,  
Ձեռ չտաք  
Ափիս,  
Ձեռ մաքրվի  
եւ նորից  
Սկացել են  
Արևից:

Ափը մաքրվեց,  
Թաթը մաքրվեց:  
Լվանում են  
Քիթիկը  
Հաց ե լինում  
Աղջիկը.

— Ո՛ր, ինչո՞ւ յեք  
Չարչարում,  
Քիթս ո՞ճառ  
Չի սիրում:  
Չի մաքրվի  
եւ նորից,  
Սկացել ե  
Արևից:  
Քիթն եւ մաքրվեց  
Ափ ու թաթի պես:  
Լվանում են  
Տոսիկը,


Հաց ե լինում  
Աղջիկը.

— Ազատեցեք ինձ  
Ձրից,  
Իզուր խոտու եք  
Տալիս,  
Չի մաքրվի  
եւ նորից,  
Սկացել ե  
Արևից:

Տոսիկն եւ մաքրվեց  
Քիթ ու թաթի պես:

— Ա՛յ, մաքուր ես  
Հիմի, տես,  
Ինչքան, ինչքան  
Սիրուն ես:  
Կեղտոտ եյիք,  
Մրտաված,  
Արևից չեք  
Սկացած.

1935



## ՄԻՍՏՐ ՏՎԻՍՏՐ

(Ս. ՄԱՐՇԱԿ)

Գալով մի յերկիր, թյուրիմացութիւնն իսու-  
ստափելու համար, աշխատեցե՛ք պահպանել այդ  
յերկրի որեւեմներն ու սովորութիւնները:

(Կարլ Բեդենբերի հին ուղեցույցից)

1

Նյու-Յորքի,  
Հսկա քաղաքի  
Մի փողոցում  
Բանուկ,  
Ապրում ե  
Մի մարդ,  
Անունը՝ Կուկ:  
Կուկն ունի  
Գրասենյակ:  
Յեթե ունեք  
Ազատ ժամանակ,  
Ուզում եք զուք

Աշխարհ դուրս գալ  
Փարիզ, Պամիր,  
Բուդապեշտ, յաճող  
Գնալ, տեսնել Մոնթե-  
Ազատ, հեշտ, ուրիշ  
Կուկն իսկույն յիջր  
Շողենալում զապիւ  
Կպարասալի  
Մի լավ սենյակ,  
Ուղտ կուղարկի  
Նա ձեզ համար,  
Կամ կասի,  
Վոր տան  
Սովառնակ:

Հյուրանոցում  
Կտա համար  
Լողարանով,  
Շատրվանով,  
Նախաճաշով,  
Այգիներով  
Մեծ ու հարմար:  
Արմավենի,  
Յեղենի,  
Հաշաֆու ու  
Արևմուտքը,  
Յուլյ կտա ձեզ  
Միտար Կուկը:

2

Միտար Տվիտարը՝  
Նախկին մինիտարը,  
Վոր ունի բանկ,

Թերթեր,  
Շոգենավեր,  
Գործարաններ,  
Վճռեց գնալ  
Իր կնոջ և  
Աղջկա հետ  
Աշխարհ տեսնել:

3

Առավոտյան  
Չարթնեց կուկը,  
Հեռախոսը  
Բացեց տուար.

— Շոգենավում

Նյու-Յորք — Լենինգրադ,  
Պատրաստեցեք  
Չորս մեծ սենյակ,  
Ճաշարանով,  
Լողարանով,  
Այգիներով,  
Շատրվանով:  
Միայն նայեք,  
Վոր չլինեն  
Դրացի՝  
Նեզր, հնդիկ,  
Չինացի:  
Շոգենավում  
Չտեսնեմ դրանց.  
Յես չեմ սիրում  
Գունավոր ժարդկանց:  
Կուկն իսկույն, թե՛  
— Լսում եմ յես ձեզ:

Ամեն ինչ կանեմ  
Ձեր ուղածի պես:  
Ցտեսություն,  
Ձերդ մեծություն:

4

Մեկնելուց  
Ուղիդ  
Տասը բոպե  
Առաջ,  
Միսոր Տվիստրը,  
Նախկին մինիստրը,  
Առք,  
Փանոք,  
Կողքին աղջիկ,  
Ձեռքին կապիկ,  
Մի պառավ կին,  
Ակնոցն աչքին,  
Չորս ծառաներ  
Հսկա ու մեծ,  
Պայուսակով  
Քսան ու վեց,  
Շոգենավը  
Բարեհաճեց:

5

Լող ե տալիս  
Շոգենավը  
Ջրի վրա  
Մութ, ալիքոտ,

Մխար Տվխարին,  
Նախկին մինխարին  
Ամերիկայից  
Բերում մեզ մտա:

Մխար Տվխարը,  
Նախկին մինխարը,  
Վոր ունի բանկ,  
Թերթեր,  
Գործարաններ  
Մեծաքանակ,  
Շոգենավում  
Խաղում և գնդակ:

Ուրախ և նա,  
Վոր չունի  
Դրացի  
Նեզր, հնդիկ,  
Զինացի:

Իր հետ նրանք  
Չեն նստի բնավ,  
Նրանց տանում և  
Ուրիշ շոգենավ:  
Այնտեղ միշտ ել  
Թաց և ու ծուխ,  
Ու չորս կողմը  
Պատած սև մուխ:

6

Մխար Տվխարը,  
Նախկին մինխարը  
Միլիոներ,

Ահա հասնում և,  
Վորպես տուրխատ,  
Ես ես ես եր:

Աղմուկ և լավում  
Լենինգրադի  
Նավահանգստից,  
Ահա քաղաքը  
Մեծ շոգենավի,  
Զրի աջ կողմից:  
Մոխրագույն ջրեր,  
Վերամբարձ տներ:

Գլխարկը բռնած  
Նա իր աջ ձեռքով,  
Արագ իջնում և  
Նեղիկ կամրջով:

Նայելով  
Պետրոպոլիսի  
Մրածայր ձողին,  
Նրանք բռնեցին  
Հյուրանոցի ուղին:

Տեղավորեցին  
Պայուսակ և իր,  
Արագ նստեցին  
Ավտոմոբիլ:  
Յերկար ու զիլ  
Մուլոցով,  
Նրանք անցան  
Փողոցով:

Միսոր Տվիսորը,  
 Նախկին մինիսորը,  
 Միսոր Տվիսորը  
 Մի, իոներ,  
 Վոր սենի շատ  
 Գործարաններ,  
 Թերթեր,  
 Շոգեն ավեր,  
 Ներս և մանուկ  
 Խորհրդային  
 Հյուրանոցը  
 «Անգլեաներ»:  
 Մի թանկագին  
 Միգար բերնին,  
 Ասում և նա  
 Դոնապանին.  
 — Մեզ մի քանի  
 Համար տվեք.  
 Հեռագիր ենք  
 Տվել յերեկ:  
 — Կտանք, կտանք  
 Յերկու սենյակ  
 Փառավոր, —  
 Պատասխանեց  
 Դոնապանը  
 Բեղավոր:—  
 Համարներն են  
 Հինգ ու վեց,  
 Լուսավոր են  
 Ու մեծ-մեծ:

Գորգեր փռված  
 Միջանցքով,  
 Հայելիների  
 Կողքով,  
 Գնում են  
 Դեպի համարը  
 Բարձրահասակ  
 Դոնապանը  
 Սյուրտուկով,  
 Հետո յեկվորը  
 Լայն պանամա  
 Գլխարկով,  
 Մի պառավ կին  
 Ակնոցն աչքին,  
 Յեվ մի աղջիկ՝  
 Ջեռքին կապիկ:  
 Մեկ ել հանկարծ  
 Յեկվորները  
 Լայն բացեցին  
 Բերանները:  
 Միսոր Տվիսորը  
 Ապշած նայեց,  
 Վողջ մարմինը  
 Քրտինք պատեց:  
 Վերևից,  
 Վաթսուկներորդ  
 Համարից,  
 Գայիս եր  
 Գլխեք ով  
 Բարձր հասակով

Մի սևամորթ,  
Բերնին ծխամորճ:  
Իջնում եր  
Նա ցած,  
Սև ձեռքը  
Կամաց  
Սանդուխքին քսում  
Յեզ հանդարտ  
Ու լուրջ  
Ծխամորճ ծխում:  
Իսկ  
Հայելիների  
Կողքով,  
Իրար յետևից  
Շարքով,  
Անցնում ելին  
Անթիվ նեղրեր  
Սևամորթ,  
Բերանների  
Մի-մի  
Կարճ ծխամորճ:

Իջնում ելին  
Ցած,  
Ձեռքերը  
Կամաց  
Սանդուխքին  
Քսում,  
Յեզ հանդարտ  
Ու լուռ  
Ծխամորճ  
Ծխում:

Միսոր Տվիսորը  
Նայեց  
Դեպի ձախ,  
Նայեց  
Դեպի աջ,  
Զայրացած  
Սաց.

— Յեթե այստեղ  
Կա սևամորթ,  
Մենք չենք կարող  
Սպրեզ ձեզ մոտ:

Սլանում են  
Դեպի ցած,  
Սանդուխքով  
Յեզվորը,  
Լայն պանամա  
Գլխարկով,  
Մի պառավ կին  
Ակնոցն աչքին  
Յեզ մի աղջիկ՝  
Ձեռքին կապիկ:

Անխոս նստեցին  
Ավտոյի միջին,  
Ամուր խփեցին  
Շոֆերի մեջքին:

Դռնապանը  
Գլուխ ավեց  
Տուրիստներին,  
Ապա վազեց  
Ու մոտեցավ  
Հեռախոսին:

— Յերկու  
Քառասուն յերկու  
Քառասուն ութ:  
«Աստօրիա»:  
Այդ դձև յես,  
Կոյա:  
Յերևի հիմա  
Մեքենայով  
Ձեզ մոտ կգան  
Յերեք տուրիստ՝  
Մարդ, կին  
Ու աղջիկ,  
Մի անտանելի,  
Խայտառակ  
Մարդիկ:  
Վոր գան,  
Դու ասա.  
Բռնված են  
Հիմա  
Համարները վողջ:  
Լսեցիր, Կոյա:  
Դե, յեղիր առողջ:  
— Քսան մեկ  
Տասնութ:  
«Սիցիլիա»:  
Այդ դձև յես,  
Յիցիլիա:  
Յերևի հիմա  
Մեքենայով  
Ձեզ մոտ կգան  
Յերեք տուրիստ՝  
Մարդ, կին

Ու աղջիկ,  
Մի անտանելի,  
Խայտառակ  
Մարդիկ:  
Վոր գան,  
Դու ասա.  
Բռնված են  
Հիմա  
Համարները վողջ:  
Լսեցիր, Յիցիլիա:  
Դե, յեղիր առողջ:

— Հինգ  
Յերեսուն հինգ  
Յերեսուն իննը:  
«Բոսնիա»:  
Այդ դձև յես,  
Վանյա:  
Յերևի հիմա  
Մեքենայով  
Ձեզ մոտ կգան  
Յերեք տուրիստ,  
Անունը...  
Սրան ել նույնը:

9

Սլանալով  
Արագ, արագ,  
Ավտոն գնաց  
Ու կանգ առավ.  
Գողցի փողոց,  
Յերրորդ համար:  
— Վոչ, — ասում են,—

Չկա համար:  
Պեսաելի փողոց,  
Առաջին համար:  
— Վնչ, — ասում են, —  
Չկա համար:  
Ապրտամբության  
Հրապարակ  
Հինգերորդ համար:  
— Վնչ, — ասում են, —  
Չկա համար:

Մեկ էլ  
Հանկարծ  
Պայթեց շինը,  
Շուտով  
Կարծի  
Բենզինը:

10

Միտոր Տվիտորը,  
Նախկին մինստորը  
Միլիոներ,  
Վոր ունի  
Գործարաններ,  
Թերթեր,  
Շոգենավեր,  
Վերադարձավ  
Հյուրանոցը  
«Անգլետեր»,  
Հետը կինը,  
Աղջիկը,  
Ձեռքին կապիկը:

Ուղիղ ժամի  
Տասերկուսին,  
Հյուրանոցի  
Ձանգը տվին:

Միջանցքն ահա  
Լուսավորվեց,  
Դռնապանը  
Դուռը բացեց:  
— Ո՛ւշ է, — ասաց  
Դռնապանը, —  
Ձբաղված են  
Համարները:  
Ճնշված աղգերի  
Համագումար է,  
Բոլոր տեղերը  
Նրանց համար են:  
— Բա ի՞նչ անեմ,  
Հայրիկ, հիմա.  
Շատ եմ հոգնած, —  
Աղջիկն ասաց, —  
Թե քնելու  
Տեղ չգտնենք,  
Մի ատուն գնենք:  
— Հա՛, կգնես,  
Չիկագոյում չես:

11

Մայր ու աղջիկ  
Կլինեյին  
Կաթվածահար,  
Ցեթե նրանց  
Դռնապանը

Գիշերելու  
Միջոց չտար:

Նա կնոջը  
Յեզ աղջկան  
Տեղեր տվեց  
Պատվական՝  
Իր մահճակալը  
Պրոլետարական:

Իսկ Միստրը  
Միջանցքի  
Աթոռին  
Նստեց,  
— Ո՛ր, աստված,—  
Գոչեց,  
Յեզ իսկուշյն  
Քնեց:

Միստր Տվիստրը,  
Նախկին մինիստրը,  
Միստր Տվիստրը,  
Միլիոներ,  
Հողնած,  
Իաղրած  
Քնեց շեմքին  
Սորհրդային  
Հյուրանոցի  
«Անգլետեր»:

12

Քնած է նա:  
Ու ժպտում է  
Յերագում,

Յեզ քնի մեջ  
Տես, ինչ յերագ է  
Տեսնում:

Տեսնում է նա՝  
Անտուն,  
Անտեր  
Թափառում է  
Փողոցում,  
Հանկարծ վերեց  
Ողանավի  
Հոնդոց է  
Նա լսում,  
Ու վերեց  
Մեկ էլ հանկարծ  
Միստր կուկն է  
Իջնում ցած:

Վազում է նա  
Արագ-արագ  
Դեպի կուկն  
Իր ծանոթ,  
Ուրախ թռչում  
Ողանավը,  
Տեղավորվում  
Նրա մոտ:

Ահա նրա  
Հայրենիքը՝  
Ամերիկան  
Հարազատ,  
Ահա աները  
Մարմարե,

Բագմանարկ ու  
Ծառապատ:

Բացում է  
Ի ուր  
Ծերունի  
Ծառան.  
— Ամերիկայում  
Քեզ տեղ չկա, —  
Ասում է  
Նրան:

Փակվեցին  
Ամուր  
Հսկա  
Իռները,  
Տվիստը  
Չարթնեց՝  
Կրկին  
«Անգլետերը»:

Առավոտյան վաղ,  
Արևածագին,  
Յեկավ մի պատանի  
Խոզանակը ձեռքին:  
Մաքրեց կոշիկներ  
Կարմիր, դեղին, սև,  
Լայն ու նեղ,  
Շվեդական,  
Խորհրդային,  
Գերմանական,  
Ֆրանսիական:  
Ուժ ավեց իր  
Խոզանակին,

Մաքրեց կարգին,  
Ժամանակին:

Հենց վոր սրբեց  
Վերջին զույգը,  
Տեղից յելավ  
Մեր տուրիստը:  
Չեռքը տարավ  
Ի եպի ծոցը,  
Վոր հանի իր  
Ծխամորճը:  
Իոնապանն  
Այգ ժամանակ  
Յեկավ ասաց.

— Կա  
Յերկու սենյակ  
Շատրվանով,  
Լողաբանով,  
Այգիներով,  
Միայն իմացեք՝  
Այ կողքին  
Ապրում է  
Չինացի,  
Չախ կողքին  
Մալայացի,  
Վերևում՝  
Չուլուս,  
Ներքևում՝  
Ինգուս:

Քնաթաթախ  
Ծափ տվավ

Ու գոչեց  
Անգլերեն  
Միլիոնները.

— Ո — կէյ,  
Տվեք իսկույն  
Համարների  
Բանալիները:

Յե՛վ շտապով  
Առնելով  
Թե՛ր տակ  
Աղջիկը,  
Կապիկը,  
Սլացավ  
Թռչկոտալով  
Դեպի  
Համարները,  
Միտար  
Տվիտորը,  
Նախկին  
Մինիտորը,  
Միտար  
Տվիտոր  
Միլիոնները:

1934

## ԳՈՂԱՑՎԱԾ ԱՐԵԳԱԿԸ

(Կ. ԶՈՒԿՈՎՍԿԻ)

Արեգակը յերկնքում  
Ման եր գալիս, զբոսնում:  
Անցավ մի քիչ ժամանակ,  
Գնաց, մտավ ամալի տակ:

Նապաստակը խլշիկ  
Գլուխն հանեց իր բնից,  
Տեսավ դուբսը սաստիկ մութ,  
Ասավ. «Ինչո՞ւ մի՞նեց շուտ»:

Կաշաղակները խմբով  
Անցան մի՞նա՞ժ դաշտերով,  
Կչկչացին միասին,  
Արագիլին ասացին.  
«Կոկորդիլոս թշնամին  
Կու՛ր ե տվել արևին»:

Ծառի վրա ծիտիկը  
Կախ եր աղեղ քթիկը,  
Լաց եր լլինում, հառաչում,  
Արեգակին եր կանչում.

«Արև, արև թանկագին,  
Դուբս յեկ, լույս տուր աշխարհին.

Մտանց քեզ ի՛նչ կանենք մենք՝  
Դաշտում հատիկ կգտնենք»:

\*\*\*

Առավոտյան յերկու զոչ,  
Յերկարամազ ու անսոչ,  
Յեղջուրներով, միասին,  
Մեծ դարպասը ծեծեցին.

«Ե՛յ, գազաններ, վեր կացեք»  
Մեր թշնամուն շարդեցեք,  
Վոր նա, եզ փուչ կենդանին,  
Ել կուլ չտա արևին»:

Վեր կացավ արջը,  
Թողեց իր վորջը,  
Ճչաց, մոնչաց,  
Գետի մոտ գնաց:

Կռկորդիլոս թշնամին  
Արեգակը բերանին,  
Թեք եր ընկել ու նայում  
Արեգակին են փայլուն:

«Քեզ եմ ասում, անկուշտ գող,  
Մեր արևին իսկույն թող,  
Թե չե գիտես, կբռնեմ  
Ու մարմինդ կկիսեմ:  
Յե՛վ ցույց կտամ, անիրավ,  
Թե ինչ բան է գողանալ:  
Վողջ աշխարհը փչացավ,  
Իսկ դու չունես դարդ ու ցավ»:

Կռկորդիլոսը ժպտաց,  
Դարձավ արջին ու ասաց.  
«Յեթե վոր յես ուղենամ,  
Լուսնյակին ել կուլ կտամ»:

Կատաղեց արջը,  
Մոնչաց քաջը,  
Նրա վրա հարձակվեց,  
Տրորեց ու շարդոսեց:  
«Տո՛ւր, անպիտան, տո՛ւր իսկույն».  
Մեր արևին փայլիլուն»:

Չար թշնամին յերկյուղեց,  
Անասելի խիստ ցավից  
Ճչաց, գոռաց ու գոչեց,  
Արեգակին բաց թողեց:

\*\*\*


Պայծառացավ դաշտ ու սար,  
Թուփ ու տերև անհամար:  
Բարև՛, բարև՛, արեգակ,  
Կապույտ յերկինք լախարձակ:

Թռչունները յերգեցին,  
Վորսի յելան ծխտ ու ցին,  
Նապաստակը բացատում  
Թռչկոտում է, ցատկոտում  
Փափկապոչիկ սկյուռը  
Ուրախ յելավ իր ծառը:

Յե՛վ գրկեցին,  
Համբուրեցին

Արջ քեռուն,  
Վոր նա յեկավ  
Ջարդեց, հաղթեց,  
Թշնամուն,  
Վոր արեգակը նորից  
Փայլիլուճ ե վերևից:

1935



## ԱՐՋՆ ՈՒ ԼՈՒՍԻՆԸ

(Կ. ՋՈՒԿՈՎՍԿԻ)

Խելքին փշեց մեր արջի՜  
Թևեր դնի ու թռչի  
Յե՛վ թռիչքով ահագին  
Հասնի սիրուն լուսնյակին:  
Լուսնյակին, լուսնյակին,  
Են պլպլան լուսնյակին:

Յե՛վ գորտիկը կռկոան,  
Յե՛վ մկնիկը ծվծվան,  
Շտապ-շտապ, դունչը ցից  
Ըսկան նրա յետևից,  
Թռչեն, դնան միասին,  
Հասնեն պայծառ, վառ լուսնին:  
Լուսնյակին, լուսնյակին,  
Են պլպլան լուսնյակին:

Յերկու թևեր սև ու մեծ  
Նրանց ազոավը տվեց,  
Արծիվն էլ չերկու թև  
Տվեց յերկար ու թեթև,  
Բուն էլ բերեց հե՛վ ի հե՛վ:  
Յերկու պատիկ ծոխ թև:

\*\*\*

Հավաքվեցին բացատում,  
Թողած իրենց վորջն ու տուն,  
Շատ խլշիկ նապաստակ,  
Ոձ, արագիլ, գայլի ձագ,  
Բեզեմոտը հաստափոր,  
Դունչը հաստլիկ ու կոր:  
Հավաքվեցին սրանք վորջ,  
Թողած իրենց տունն ու վորջ  
Յեվ կանգնեցին ղես ու ղեն՝  
Առջի թուխքը տեսնեն:

\*\*\*

Բրդոտ արջը ահագին,  
Ձուլզ թևերն իր մեջքին,  
Ցից է յեղել լուսնի տակ,  
Լայն բացատում ընդարձակ,  
Ցից է յեղել ու ձգվել,  
Վճնց կթռչի ղեպի վեր:  
Ծառի վրա բարձրացավ,  
Նայեց լուսնին հիացավ,  
Իսկ լուսնյակից լրացած  
Կարծես մեղր է հոսում ցած:

Թափ է տալիս թևերը,  
Հաստ ու բրդոտ վոտները:  
Խելքին նայեք են առջի՝  
Կարծում է թե կթռչի:

Իսկ բացատում, ծառի տակ  
Կանգնած գայլ ու նապաստակ  
Ծաղր են անում ու ասում.  
«Անգես, հիմար անասուն,

Դու լուսնյակից վազ անցի,  
Դունչդ նրան չի հասնի»:

«Ի՞նչ եմ անում ես փոսում,  
Յես լուսնյակին եմ ուզում»:

Թափահարեց թևերը,  
Հաստ ու բրդոտ վոտները,  
Մին ել հանկարծ ընկավ ցած,  
Ճահճի միջին. չլքմիաց:

Գայլ, նապաստակ, բեզեմոտ,  
Կանգնած բարդի ծառի մոտ,  
Վճնց են ծաղրում ու խնդում  
Ձենից անտառն է թնդում...

\*\*\*

Իսկ լուսինը հեռավոր,  
Իսկ լուսինը փառավոր  
Սահեց ճամփով ընդարձակ,  
Գնաց, մտավ սամլի տակ:

1935

X  
ՄՈՒԿՆ ՈՒ ԱՌՆԵՏԸ

(ԿՈՒԼՈՎ)

— Լսել ես, արդյոք,  
Առնեստ հարևան,  
Սրանից ել լավ,  
Ուրախալի բան.  
Ասում են կատուն,  
Չար ու մկնակեր,  
Հսկա առյուծի  
Ճանկն ե ընկել:  
Ա՛յ թե քեֆ կանենք  
Խոհանոցում մենք:

— Մի ուրախանա,  
Մկնիկ հարևան,  
Ի՞նչ առյուծ, ի՞նչ բան:  
Յեթե վոր գործը  
Ճանկերի համար,  
Կատվի թաթերից  
Վնչ վոր չի պրծնի...  
Հագիվ առյուծը  
Կենդանի մնա.  
Փխիկից ուժեղ  
Ել գազան չկա:

X  
ԿԱԶԱՂԱԿՆ ՈՒ ԱԳՌԱՎԸ

(Ա Ռ Ա Վ)

Կաշաղակը կշկշալով  
Ծառից ծառ եր թռչկոտում,  
Իսկ ազոավը լուռ, անվրդով  
Նստած՝ ականջ եր դնում:

— Ի՞նչ ես նստել, ականջ դնում  
Լուռ ու անխոս, սիրելիս,  
Զլինի՞ թե չես հավատում  
Ասածներին, պատմածին:

— Չալիկ քույրիկ, յես չեմ ծածկում,  
Հավատալս չի՞ գալիս.  
Ով վոր քեզ պես շատ ե խոսում,  
Շատ սուեր ե դուրս տալիս:

1910

X  
ԱՄԵՆԱԼԱՎ ՅԵՐԳԻԶԸ

(ԱՌԱԿ)

Թևալորների  
Արքան փառավար՝  
Արծիվը հզոր,  
Որերից մի որ  
հուշտ կերավ, խմեց,  
Ձինջ ողում ճախրեց,  
Ապա ցանկացավ  
Լավ յերգեր լսել,  
Չանձրույթը վանել:

«Ե՛յ, ազուավ», — գոչեց  
Չայնովն ուժգին  
Իր սև ծառային: —  
«Շտապիր շուտով  
Փնտռել անտառում,  
Կամ թե դաշտերում  
Մեր յերգիչներից  
Ամենալավին,  
Արժանավորին:  
Յե՛վ յերբ կգտնես՝  
Իեր նրան ինձ մտա՝  
Յերգի յեմ կարոտ»:

\*\*\*

Ու թե՛ն տվեց  
Ծառան շապով,  
Բարձր կռոցով  
Թռավ հեռացավ,  
Նստավ մի ծառի,  
Վոր լավ միտք անի,  
Մի յերգիչ գտնի,  
Պալատը տանի:  
Յերկար մտածեց,  
Շատ դես-դեն ընկավ,  
Վերջապես գտավ,  
Վոր թռչուններից  
Իր ձագն է միայն  
Յերգիչ աննման:

\*\*\*

Յե՛վ իր անձոռնի  
Չագին կռավան  
Մոտ բերեց ծառան  
Ու հրամայեց,  
Վոր նա պալատի  
Մոտ ծառին նստի,  
Անուշ, գրավիչ  
Յերգերն ասի,  
Վոր արքան լսի,  
Իսկ ինքն ուրիշ  
Մի ծառի նստեց՝  
Գովքի սպասեց:

\*\*\*

Հենց լոր յերգիչը  
Բերանը բացեց,  
Արքան սարսափեց  
Ու գոչեց, «Ազնավ,  
Ի՞նչ է պատահել.  
Կրակ է ընկել,  
Մարդ է սպանվել...  
Ես ինչի՞ համար  
Կանչում եմ հավար»:  
«Բան չի պատահել,  
Ձերդ մեծություն,  
Յերգիչն է յերգում:  
Սրանից լավը,  
Հավատն, արքան,  
Աշխարհում չկան...»

1910



X

Կ Ա Ր Ա Պ Ը, Ջ ՈՒ Կ Ը Յ Ե Վ Խ Ե Ց Գ Ե Տ Ի Ն Ը

(ԿՈՒՆՈՎ)

Մի անգամ ձուկը,  
Կարապ, խեցգետին,  
Մի բեռնավորված  
Սայլի լծվեցին:

Թեև այնքան ել  
Ծանր չեք բեռը,  
Սակայն կարապը  
Դեպի ամպերը,  
Ջուկն շտապով  
Գնում դեպի գետ,  
Իսկ խեցգետինը  
Գնում եր յետ-յետ:  
Քաշում են, քաշում,  
Սայլը չի շարժվում:

Ո՛վ ե մեղավոր  
Արդյոք այս բանում,  
Մենք այդ չենք քննում,  
Բայց մինչև այսօր  
Սայլն իր բեռով  
Մնում ե տեղում:

1932



X  
Տ Ռ Ռ Ա Ն Ը

(Կ Ռ Ի Լ Ո Վ)

Մանուկի թողած  
Հաստ թելից կապված

Տոռանն անագին ամպերի ասկից  
Դաշտի թիթեռին ձայնեց. «Սիրելիս,  
Կհավատաս վոր իմ յեղած տեղից  
Դու հաղիվ-հաղ ես յերևում աչքիս:  
Խոստովանիր վոր դու նախանձում ես  
Ի՞մ այսքան բարձր ու վեհ թռիչքիս»:

Թիթեռնիկն ասաց.  
«Թելից ես կապված,

Յես քո եղ փառքին հեշ չեմ նախանձում,  
Իզուր ես դու քեզ մի մեծ բան կարծում:  
Այդպիսի կյանքը, հավատն, հոգիս,  
Հեռու յե իսպառ յերջանկությունից:

Իսկ յես,  
Քեզ պես

Ամպերին բնավ թեև չեմ հասնում,  
Բայց անկախ, ազատ  
Քե՞ք ցանկացած տեղերն եմ գնում:

1910

X  
Շ Ո Ւ Ն Ն Ո Ւ Ջ Ի Ն

(Կ Ռ Ի Լ Ո Վ)

Որերից մի որ Բողարը գոմում  
Մկսեց փտնել, անպատվել, ձիուն.

— Մի հարցնող լինի՞ թե ի՞նչ ես անում,  
Վոր դարու գլխին դուր քար ես գցում:  
Ի՞նչ մի մեծ բան ե հերկել, սայլ քաշել,  
Ուրիշ արածդ յես չեմ ել լսել:

Այ, իմ արածն ուրիշ ե արդեն,  
Իմ լավ գործերը բոլորը գիտեն.  
Ցերեկը դաշտում հոտն եմ հսկում,  
Գիշերն ել անքուն տունը պաշտպանում:

— Շատ ճշմարիտ ե,— ձին պատասխանեց:—  
Արածդ գիտեմ, շատ քաջ ես, ապրես:  
Բայց մի մոռացիր՝ տանը, թե դաշտում  
Իմ աշխատանքն ես հսկում, պահպանում...

1909

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## 1. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	Եջ
1. Անցան	13
2. Պապաչուստ	14
3. Ի՛նչ սիրուն է	15
4. Ծաղիկները	16
5. Գարուն	17
6. Ծիան ու տղան	19
7. Գարնանացան	20
8. Ալի	21
9. Մարյակի տունը	22
10. Ծառատունկ	23
11. Գարուն	24
12. Մայիսը	25
13. Պատկեր	26
14. Ուռենու հյուրերը	27
15. Ծիտիկին	29
16. Արտուախ	30
17. Գիշ	31
18. Առավ.	33
19. Սիրուն գիշեր	35
20. Աշուն	36
21. Դեպի աշխատանք	37
22. Շուկան աշնանը	38
23. Աշնան տերեր	39
24. Ծիան ու ծիծեռնակը	40
25. Աշնան յերգ	41
26. Աշուն	42

27. Ձմեռ	43
28. Ձմեռ	44
29. Մաքուր ողում	45
30. Նոր տարվա նվերը	46
31. Մեր տոնածառը	47
32. Տոնածառ	48
33. Աբջի քունը	49
34. Յեղևին	50
35. Ձմռան վերջը	51
36. Չորս յեղանակ	52
37. Բրիգադիր	54
38. Հիվանդ փխտիկը	55
39. Սավառնակը	56
40. Հանելուկ	57
41. Ճանճը	58
42. Անտառը	59
43. Հյուսնոցում	60
44. Փխտիկի դասը	62
45. Շոֆեր	63
46. Բամբակազտիչ զործարանում	65
47. Կենդանիներ	66
48. Թռչուններ	68
49. Յերեք փխտիկների պատմությունը	70
50. Հասմիկի նամակը	72
51. Կոլխոզի համար	78
52. Մեղունների կոմունան	85
53. Մեր դետը	90
54. Ուրախ Հրայրը և սագի սայլը	95
55. Չարդարենք	113
56. Հոկտեմբեր	114
57. Լեհին պապին	116
58. Իլիչի աչիկները	117
59. Լեհինի մասին	118
60. Բանակը կարմիր	120
61. Այն ով է	122
62. Տատիկն ու Թոռնիկ	124
63. Մայիս	126
64. Գոանվեցի յերգը	

II. ՀԵՔԻԱԹՆԵՐ ՑԵՎ ԱՌԱԿՆԵՐ

65. Խանն ու հովիվը . . . . .	131
66. Գիտուններն ու առյու . . . . .	135
67. Խորամանկ աղքատները . . . . .	137
68. Ճսալիկ ծիտիկը . . . . .	138
69. Խարված ծիտիկը . . . . .	139
70. Գեղը հարկահան . . . . .	142
71. Ուղտն ու եղը . . . . .	146

III. ԹԱՐԳՄԱՆ ՈՒԹՅՈՒՆՆԵՐ

72. Իրըչկան, Զինըչկան և Նինըչկան . . . . .	153
73. Պավլիկ Մորոզով . . . . .	155
74. Միորիկներ . . . . .	167
75. Հիմար մկնիկը . . . . .	174
76. Մրոտ աղջիկը . . . . .	178
77. Միսոր Տվիսոր . . . . .	182
78. Գողացված արեգակը . . . . .	201
79. Արջն ու լուսինը . . . . .	205
80. Մուկն ու առնետը . . . . .	208
81. Կաչաղակն ու ագռավը . . . . .	209
82. Ամենալավ յնրգիչը . . . . .	210
83. Կարապը, ձուկը և խեցգետինը . . . . .	213
84. Տոռանը . . . . .	214
85. Շունն ու ձին . . . . .	215

Գառ. Խմբագիր՝ Ա. Հայրյան  
Տեխ. Խմբագիր՝ Ա. Գառաբաբյան  
Սրբագրիչ՝ Մ. Փարսադանյան



Գրավիտի լեպոր՝ Վ. 2072. Հրատ. № 4785.  
Գառվեր 47. Տիրութ 4000.  
Թուղթ 62x74 Տպագր. 18<sup>3</sup>/<sub>4</sub> մամ.  
Մեկ մամուլում 24480 նշան.  
Հանձնված է արտադրության 9 հունվարի 1939 թ.  
Ստորագրված է տպագրության 9 փետրվարի 1939 թ.

Գեատրոտի I աղաբան, Յերեան, Լենինի, 66.

«Ազգային գրադարան»



NL0408143

6 n

264

10387